

Յուրի Ս. Ավետիսյան

Բանաս. գիտ. դոկտոր

yu.s.avetisyan@gmail.com

ORCID: 0009-0004-7475-8161

**ԳՆԱՀԱՏՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ
ՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ***

Ամփոփում

Հոդվածում ուսումնասիրվում է գնահատողականությունը մեղիալեզվի տիրույթում: Գնահատողականությունն իր միջուկային էությունյամբ վերաբերմունքային-հասկացական կարգ է, որը մեղիատեքստում դառնում է հանրային կարծիքի արտահայտության գործիք: Այն արտացոլում է հաղորդողի սուբյեկտիվ դիրքորոշումը իրադարձության կամ անձի նկատմամբ և ԶՀՄ-ում վերափոխվում է գաղափարական ու ներգործական ազդակի: Հատկապես թվային միջավայրում, որտեղ բովանդակության տարածումը հաճախ հիմնված է վերաբերմունքի վրա, գնահատողականությունը դառնում է մեղիալեզվի առանցքային բաղադրիչ:

Լեզվաբանական ուսումնասիրություններում այն դիտարկվել է որպես համակարգ, որը ներառում է վերաբերմունքի, ներգրավվածության և աստիճանակարգության չափորոշիչներ: Հայ գիտական դաշտում թեման դեռևս համարժեքորեն ուսումնասիրված չէ, չնայած առկա են առանձին դիտարկումներ մամուլի լեզվի, հանրային խոսքի ու գովազդի վերաբերյալ: Հոդվածը նպատակ ունի համակողմանի ներկայացնելու գնահատողականության դերը ժամանակակից ԶՀՄ-ում՝ ուսումնասիրելով այն թե՛ լեզվական մակարդակով (բառ, նախադասություն),

* Հոդվածն ընդունվել է տպագրության 24.06.2025 :

թե՛ խոսույթային ու համատեքստային հարթություններում՝ հաշվի առնելով հեղինակին, լսարանը, ժանրը, մեդիամիջավայրը և մշակութային-քաղաքական համատեքստը:

Բանալի բառեր — մեդիալեզու, հաղորդակցում, գնահատողականություն, հիմնարար հատկանիշ, զարգացման շրջափուլեր, գործառական ոճեր, գնահատողական բառապաշար, օտարաբանություններ, դարձվածքային փոփոխություններ, արտահայտչական միջոցներ, ներակայում, ժանր, մակրոհամատեքստ

Yuri S. Avetisyan

Doctor of Sciences in Philology

EVALUATIONITY IN CONTEMPORARY MASS COMMUNICATION CHANNELS

Abstract

The article explores evaluativity within the domain of media language. At its core, evaluativity is an attitudinal-conceptual category that, in media texts, becomes a tool for expressing public opinion. It reflects the communicator's subjective stance toward an event or individual and transforms into an ideological and persuasive impulse within the media. Especially in the digital environment—where content dissemination often relies on expressed attitudes—evaluativity becomes a key component of media language.

In linguistic studies, it is viewed as a system that includes the parameters of attitude, engagement, and graduation. In the Armenian academic field, the topic remains underexplored, although there are isolated studies related to the language of the press, public speech, and advertising. The article aims to provide a comprehensive account of the role of evaluativity in contemporary mass media, examining it on both linguistic levels (word, sentence) and in discourse and macro-contextual dimensions—such as author, audience, genre, media platform, and the broader cultural-political context.

Keywords — media language, communication, evaluativity, fundamental feature, stages of development, functional styles, evaluative vocabulary, loanwords, phraseological changes, expressive means, representation, genre, macro-context

ОЦЕНОЧНОСТЬ В СОВРЕМЕННОМ МЕДИАЗЫКЕ

Резюме

В статье исследуется оценочность в сфере медиаязыка. По своей сути, оценочность представляет собой категорию, выражающую отношение, которая в медиатексте становится инструментом выражения общественного мнения. Она отражает субъективную позицию автора по отношению к событию или личности и в медиа превращается в идеологический и воздействующий импульс. Особенно это заметно в цифровой среде, где распространение контента часто основано на выраженной позиции, поэтому здесь оценочность становится ключевым компонентом медиаязыка.

В лингвистических исследованиях оценочность рассматривается как система, включающая параметры отношения, вовлеченности и градации. В армянском научном пространстве тема оценочности в медиаязыке пока недостаточно исследована, хотя имеются отдельные работы, касающиеся языка прессы, публичной речи и рекламы. Цель данной статьи - всесторонне представить роль оценочности в современных СМИ, анализируя как языковые уровни (слово, предложение), так и дискурсивные и контекстуальные аспекты - автора, аудиторию, жанр, медиасреду, а также культурно-политический контекст.

Ключевые слова — медиаязык, коммуникация, оценочность, фундаментальная характеристика, этапы развития, функциональные стили, оценочная лексика, заимствования, фразеологические изменения, экспрессивные средства, репрезентация, жанр, макроконтекст

Unlup

Գնահատողականությունը վերաբերմունքային-հասկացական կարգ է: Սովորաբար արտահայտում է հաղորդողի սուբյեկտիվ դիրքորոշումը իրադարձության, հաղորդման առարկայի կամ անձի նկատմամբ: Մեղիատեքստում այն ձեռք է բերում հասարակական բնույթ. այստեղ հաղորդողը (լրագրողը) սովորաբար հանդես է գալիս որպես հանրային կարծիքի կրող և արտահայտիչ:

Գնահատողականությունն այսօր մեդիալեզվի առանցքային բաղադրիչ է հատկապես թվային միջավայրում, որտեղ բովանդակության «վաճառքը» հաճախ հիմնված է դիրքորոշման վրա¹:

20-րդ դարի երկրորդ կեսից սկսած՝ գնահատողականության հարցը լեզվաբանական ուսումնասիրության առարկա է դարձել հատկապես այն դաշտերում, որոնք առնչվում են հանրային խոսքի և զանգվածային հաղորդակցության կառուցվածքին (Fairclough, 1995; Van Dijk, 1988): Հետագա ուսումնասիրություններում գնահատողականությունը ներկայացվում է նաև որպես համակարգ՝ ներառելով վերաբերմունքի (attitude), ներգրավվածության (engagement) և աստիճանակարգության (graduation) չափորոշիչներ (Martin White, 2005):

Հայերեն գիտական գրականության մեջ գնահատողականությունը՝ որպես առանձին լեզվաբանական կարգ և մեդիախոսույթի բաղադրիչ, դեռևս ուսումնասիրման սահմանափակ առարկա է: Թեպետ մամուլի լեզվին, լրագրողական նյութի կառուցվածքին ու ազդեցիկությանը վերաբերող աշխատություններում, հրապարակային խոսքի կամ գովազդային տեքստի վերլուծություններում (Շալունց, 1987; Եզեկյան, 2002; Դավթյան, 2006; Ալեքսանյան Է., 2017; Հովհաննիսյան Ս., 2022; Խաչատրյան Ա., 2023 ևն) առանձին դիտարկվել են հաղորդման սուբյեկտիվության, արտահայտչականության և ազդեցության գործոնները, սակայն գնահատողականությունը՝ որպես մեդիալեզվի հիմնարար հատկանիշ և դրա լեզվական ու խոսույթային արտահայտությունները, քիչ թե շատ ամբողջական քննության չեն ենթարկվել:

Այս հոդվածը ադայիսի մի ամբողջական ուսումնասիրություն լինելու նպատակ ունի: Ընտրել ենք մեթոդաբանական մի քանի հիմնական ուղղություններ: Գնահատողականությունը դիտարկել ենք ոչ

¹ Ժամանակակից հետազոտողի կարծիքով՝ ճշգրիտ լինելու համար նպատակահարմար է **ԶԼՄ** տերմինի (զանգվածային լրատվական միջոցներ) կապակցական **լրատվական** բաղադրիչը փոխարինել **հաղորդակցություն** տերմինով (**ԶՀՄ** — զանգվածային հաղորդակցության միջոցներ): Հարցադրումը պայմանավորված է զանգվածային լրատվության միջոցների բովանդակային ու կառուցվածքային, ինչպես նաև գործառնության և այլ կարգի մի շարք փոփոխություններով (լսարանի ներգրավվածություն, սոցիալական ներգործություն, փոխադարձ մեկնաբանություններ ևն), որոնք արձանագրվում են զանգվածային հաղորդակցության միջոցներում (**Н. Клушина**, 2010; **Колесникова О.**, 2020): **ԶՀՄ** հասկացությունը ներառում է տպագիր մամուլը, լրատվության էլեկտրոնային միջոցները (ռադիոհեռուստատեսություն, էլեկտրոնային մամուլ, տեղեկատվական գործակալություններ), սոցցանցային հաղորդակցման միջոցները (Telegram, Facebook, TikTok, Instagram ևն): Շարադրանքում **մեդիալեզու** և **ԶՀՄ լեզու** հասկացությունները գործածում ենք որպես տերմինային հոմանիշներ:

միայն որպես ԶՀՄ լեզվի արտահայտչականության մաս կամ բաղադրիչ, այլև հաղորդման գաղափարական ու ներգործական առանցք: Այն ընդհանուր ակնարկով նկարագրվում է նախ ԶՀՄ լեզվի զարգացման փուլերի համատեքստում՝ իբրև հասարակական-քաղաքական միջավայրով պայմանավորված ու լսարանի փոփոխություններին համապատասխանող իրողություն (ֆենոմեն): Ապա հատուկ քննության առարկան դառնում ժամանակակից ԶՀՄ-ում գնահատողականության արտահայտման ինչպես զուտ լեզվական միջոցները՝ բառ, բառակապակցություն, նախադասություն և, առհասարակ, ցանկացած լեզվական նշան, որ ունի գործառական-գնահատողական դեր ու արժեքայնություն, այնպես էլ խոսույթային ու մակրոհամատեքստային գործոնները՝ գործառական ոճեր, հեղինակ, լսարան, ժանր, մեդիամիջոց; ազգային-քաղաքական կյանք, պատմաաշխարհագրական ու մշակութաբանական միջավայր ևն:

1. Գնահատողականության բնույթն ու դերը մեդիալեզվի զարգացման տարբեր շրջափուլերում

Մեդիալեզուն՝ որպես հաղորդակցման յուրահատուկ համակարգ, ժամանակի ընթացքում ենթարկվել է կառուցվածքային և գործառական վերափոխումների: Խորհրդային տարիներին ԽՍՀՄ ժողովուրդները մշակութաբանական ընդհանրություններ շատ ունեին: Դրանք շատ ավելի զգալի էին գաղափարական-քարոզչական բնագավառում և, իհարկե, այդ քարոզչությունը իրականացնող միջոցների համակարգում:

1930–1980–ականների սկիզբը ընդունված է համարել խորհրդային մամուլի լեզվական և խոսքային նորմերի ձևավորման, լեզվի՝ դեպի կաղապարայնացում տանող մի քանի հատկանիշների «կոնսերվացման» շրջափուլ: Դա լեզվի ձևավորման խորհրդային շրջափուլն է, որը ստացել է «ամբողջատիրական լեզու» («тоталитарный язык») անվանումը: Այդ լեզվին հատուկ էր շեշտված քարոզչական-գաղափարական և քաղաքականացված բնույթը:

Զանգվածային լրատվության միջոցները «ազիտպրոպագանդայի» հզոր և անփոխարինելի գործիք էին: ԶԼՄ-ներին պարտադրվող գործառույթները (տեղեկատվական-քարոզչական, դաստիարակչական, կազմակերպական ևն), որոնք թելադրվում էին վերուստ՝ պետական կառավարման մարմինների անմիջական հսկողությամբ, ենթադրում էին

րում էին նաև լեզվաոճական մշակված հատուկ համակարգ, որը մի տեսակ ընդհանուր էր և՛ միութենական, և՛ հանրապետական լրատվության միջոցների համար: Այդ համակարգի բաղադրիչներն էին յուրահատուկ բառապաշարը (ընդգծված դրական կամ բացասական գնահատողականությամբ), շարահյուսական հատուկ կառույցները, որոնք հաճախ ձևակերպվում էին կարգախոսի («լոզունգի») տեսքով՝ որպես վերնագրեր («Հնգամյակը երեք տարում», «1978-ը հարվածային աշխատանքի տարի», «Երեք տարվա բնագիծը հաղթահարված է», «Ապրել և աշխատել լենինաբար», «Հնգամյակի բնագծերը կնվաճվեն հաջողությամբ», «Տիեզերական արագություն կոմերիտական գործին», «Լենինյան գործի հավատարիմ շարունակողները»), ժանրային որոշակի տեսակներ (լուրի գրառում, առաջնորդող հոդված, ՏԱՍՍ-ի հաղորդումները), կադապարային արտահայտություններ ու ձևեր («Մեր սեփական թղթակիցը հայտնում է», «Մեր արտահաստիքային թղթակից....», «ԱՐՄԵՆՊՐԵՍ-ը հաղորդում է»), յուրահատուկ թեմատիկա («Կուսակցական կյանք», «Նոր բնագիծ», «Սոցիալիզմի երկրներում», «Կոլտնտեսային կյանք», «Աշխարհն այսօր», «Հարվածային ձակատում») ևն: «Որպես կանոն, բացակայում է անհատական մոտեցումը իրականությանը, խոսքին: Խմբակային **մենք**-ը կուլ է տալիս հեղինակային **ես**-ին....» («Язык средств массовой информации», 2008, 464-465): Այդ հատկանիշները բնորոշ էին գրեթե բոլոր լրատվության միջոցներին: Դրանց ոճական տարբերակվածությունը աննշան էր:

Կուսակցական-գաղափարական կենտրոններից էին թելադրվում նաև գնահատողական նորմերն ու չափանիշները: Դրանք իմաստային բազմաշերտության չէին ենթարկվում, այլ ներկայացվում էին որպես անառարկելի ձշմարտություններ: Բուն լեզվական մակարդակում դա արտահայտվում էր բառիմաստի նեղդասակարգային վերաիմաստավորումներով, ընդգծված բացասական (իմպերալիզմ, ժողովրդի թշնամիներ, կապիտալիզմ, սպառազինությունների մրցավազք) կամ ընդգծված դրական գնահատողական բառերով (խաղաղություն, աշխատանք, սոցիալիզմ, սոցմրցություն, բարեկեցություն): Գնահատողականությունը ոչ միայն բացահայտ էր ու քարոզչական, այլև լեզվակադապարային. լեզվամիջոցները դառնում էին քարոզչության անմիջական գործիք:

Առաջին շրջափուլի իշխող ընդհանուր միասեռ ու միօրինակ լեզվական այդ որակից մասամբ առանձնանում է 1941-1945 թվականների՝ պատերազմի տարիների լրագրության լեզուն, երբ կտրուկ ուժե-

ղացավ զգացմունքային, հոետորական գիծը, լայն տարածում ստացան քարոզչական-հուզական միջոցները, զգալիորեն աճեցին խոսքի հրապարակախոսականությունը և անհատական գնահատությունը:

Խորհրդային մամուլի լեզվի զարգացման **հաջորդ շրջափուլը (1985-1991 թթ.)** կապվում է հասարակական-քաղաքական կյանքի զարգացման մի շրջանի հետ, որը կոչվեց «перестройка»: Փոփոխությունների ընդհանուր ուղղվածությունը կարելի է բնորոշել որպես ԶԼՄ-ների լեզվի ժողովրդայնացում՝ արտահայտման նոր ոճ, ազատ մտածողություն և լեզվական միջոցների ազատ ընտրություն, ժողովրդավարությանը վերաբերող նոր բառեր ու արտահայտություններ, հրաժարում կարծրատիպերից: Բառապաշարը ընդլայնվում է տնտեսագիտական նոր տերմիններով ու քաղաքագիտական նոր հասկացություններով: Մամուլի լեզվում լայնորեն տարածվում է խոսակցական լեզուն: Համագործակցական բառերի կողքին հայտնվում են ժարգոնային բառեր ու փողոցի լեզուն: Ակտիվորեն փոխվում է հեղինակի տիպը. գնալով ավելի է ընդգծվում հեղինակային անհատականությունը. հեղինակը աստիճանաբար մոտենում է ընթերցողին, դառնում է ավելի «մարդամոտ» ու հանդուրժող: Ձևավորվում են նոր հատկանիշներ՝ տեղեկատվականության զորացում, որն արտահայտվեց հատկապես վերլուծական ժանրերում և վերնագրերում, նախկին կտրուկ գնահատողականության թուլացում: Զգալի դարձավ լրատվության միջոցների ոճական տարբերակվածությունը միմյանցից:

Այս հատկանիշները շարունակվեցին և հարստացան հայկական ԶԼՄ լեզվում անկախության տարիներին: 1991-ից մինչև XXI դարի առաջին տասնամյակները (ներառյալ 2018-ից հետո ընկած ժամանակահատվածը) հայկական ԶԼՄ լեզվի զարգացման հետխորհրդային շրջանն է՝ **անկախության տարիների շրջափուլը:**

Խորհրդային գաղափարախոսության անկումից հետո հայկական մեդիադաշտը սկսեց ձևավորվել որպես բազմակարծության հարթակ. գնահատողականության օգտագործումը դարձավ ավելի ցրված, երբեմն՝ հակասական, քանի որ մեդիախոսությամբ դեռ պայքարում էր նախկին կադապարներից ձերբազատվելու համար: Լեզվական մակարդակում նկատվում է չեզոքության ձգտում: Հատկապես նորաստեղծ անկախ լրատվության միջոցները փորձում էին ձերբազատվել նախկին պետական քարոզչությունից: Սակայն հաճախ գնահատողականություն էր սողոսկում անհամաչափ հուզականությունը՝ պայմանավորված պատերազմական իրա-

վիճակով և սոցիալ-քաղաքական ճգնաժամերով: Տեղի էր ունենում արժեքների վերախմաստավորում:

Զարգացման այս վերջին՝ երրորդ շրջափուլում թերևս կարելի է առանձնացնել, այսպես կոչված, **ենթաշրջաններ**՝ ըստ լեզվառձական գործոնների և գնահատողականության դսևորման յուրահատկությունների. **առաջին ենթաշրջան՝ 1991–2000–ական թթ.**՝ անկախության մոտ մեկուկես տասնամյակը, երբ վերը նշված կառուցվածքաբովանդակային հատկանիշները ձևավորման ընթացքի մեջ էին, և դեռ չէր կայացել նոր ժամանակներին հատուկ մեղիախոսությոը: **երկրորդ ենթաշրջան՝ 2000–ական–2018 թթ.**՝ համացանցային ԶՀՄ զարթոնքի շրջան է՝ թվայնացման ինտեգրում, սոցցանցային միջոցների ուժգնացում և դրանց բնորոշ լեզվահամակարգերի ձևավորում: Սակայն թվայնացումը դեռ համընդհանուր չէ: Գնահատողականությունն ու ներգործող լեզուն դեռ անկանոնություններ ունենին. բացակայում էր համակարգային, ճնշող գնահատողականությունը: ԶՀՄ լեզուն մասամբ ավանդական էր, մասամբ՝ նորացված ու տակավին կրում էր խորհրդային/հետխորհրդային «ռեժիմի» լեզվական ժառանգության ազդեցությունները: Եվ վերջապես՝ **երրորդ ենթաշրջան՝ 2018–ից** հետո ընկած ժամանակահատվածը: Շատ ավելի սկզբունքային և անհանդուրժող է հեղինակային դիրքորոշումը: Լսարանը դառնում է անհամեմատ ակտիվ և հարձակողական. երբեմն իրեն է վերապահում հաղորդակցման միջոցների լեզվական «կառավարումը»՝ ինքը հաճախ դառնալով անկառավարելի: Սոցցանցային լեզվի անկանոնություններն ու ծայրահեղական դրսևորումները ներազդում են ոչ միայն էլեկտրոնային, այլև տպագիր մամուլի լեզվի վրա: Լեզվական մշակույթ ու խոսքային վարվեցողության նորմեր են փորձում թելադրել ցանցային լրատվության միջոցները:

Այս փուլում մշակվում են մեղիալեզվի գնահատողականության արտահայտման ընդհանուր միջոցներն ու հնարները, ձևավորվում են նորերը: Դրանք ըստ ամենայնի դրսևորվեցին ինչպես բուն լեզվական մակարդակում, այնպես էլ այլ հարթակներում՝ ժանր, գործառական ոճեր, մակրոհամատեքստ, մեղիամիջոցներ են:

2. Գնահատողականության արտահայտման լեզվական միջոցները

Գնահատողականությունը ԶՀՄ լեզվում դրսևորվում է լեզվական ամենաբազմազան տարրերով, այսինքն՝ առկա է լեզվական բոլոր

մակարդակներում: Առավել ցայտուն արտահայտվեց բառային մակարդակում:

2.1. Բառային միջոցներ: Բառային մակարդակը գնահատողական համակարգի հիմնական շերտն է, որը և՛ ազդում է լսարանի ընկալման վրա, և՛ միաժամանակ ծառայում է խոսույթային դիրքորոշման պարզաբանմանը: Այդ դերը ԶՀՄ լեզվում կատարում են հատկապես գնահատողական բառային միավորները՝ դրական կամ բացասական երանգավորումներով, այսպես կոչված՝ չեզոք բառաշերտը, օտարաբանությունները, վերացական անորոշ իմաստով բառերն ու արտահայտությունները և բառային այլևայլ միջոցներ, որոնք քննվում են ստորև:

Գնահատողական և ոչ գնահատողական (չեզոք) բառապաշար: Գնահատողականությունը ընդունելով որպես լրագրային լեզվի բառապաշարի դասակարգման հիմքային հատկանիշ՝ ռուս լեզվաբաններից Ա. Սոլզանիկը այդ բառապաշարում առանձնացնում է երեք հիմնական խումբ՝ *հասարակական-քաղաքական բառեր, գնահատողական բառեր և ոչ գնահատողական բառեր* (Солганик А., 1981): Հայ լեզվաբանության մեջ հիմք ընդունելով այս դասակարգումը, բայց նաև հաշվի առնելով հայկական պարբերաթերթերի («Սովետական Հայաստան», «Երեկոյան Երևան», «Ավանգարդ») բովանդակության «ինֆորմացիոն-հաղորդակցական և պրոպագանդիստական բնույթը», ինչպես նաև դրանցում տպագրվող նյութերի այլևայլ առանձնահատկությունները, առաջարկվում է բառապաշարը դասակարգել հետևյալ կերպ՝ 1. *մասնագիտական բառեր*, 2. *գնահատողական բառեր*, 3. *լրագրային (լրագրահրապարակախոսական) բառեր*: Առաջին խմբում առանձնացվում են ենթախմբեր՝ ա) *հասարակական-քաղաքական տերմիններ* (դեկլարացիա, պետություն, կուսակցություն, գաղափարախոսություն, արտահանում, կապիտալ ներդրումներ, ագրեսիա, միլիտարիզմ, գիտական սոցիալիզմ ևն), բ) *այլ բնագավառի տերմիններ* (ծանրության կենտրոն, դրամա, զենիթ, կլիմա, զուգահեռանիստ, բանաձև, զարկերակ ևն) (**Շալունց**, 1987, 67–68): Սկզբունքորեն համաձայնելով այս մոտեցմանը՝ պիտի հավելենք, սակայն, հետևյալը: «Մասնագիտական բառեր» ասված խումբը իր գնահատողական որակներով սկզբունքորեն տեղավորվում է ոչ գնահատողական բառապաշարի մեջ՝ բացառությամբ այդ բառերի փոխաբերական կիրառությունների, որը շատ բնորոշ է մեդիալեզվին: Վերջինները օժտված են որոշակի արտահայտաչականությամբ, որը պայմանավորված է դրանց հենց գնահատողական

բնույթով: Այսպես՝ հեղինակը որպես մասնագիտական բառի փոխաբերական գործածության օրինակ է մատնացույց անում հետևյալը. «Պետական սեկտորը դարձավ էկոնոմիկայի **ռոնաշարը**, նրան օգնելով, որ...»: Ընդգծված բառը համատեքստում ունի ակնհայտ դրական-գնահատողական բնույթ, ինչպես **մագոլսիստ**-ը՝ բացասական-գնահատողական՝ հետևյալ օրինակում. «Գործարար աշխարհը դեմ է քաղաքական **մագոլսիզմին**»: Նմանապես՝ *կառավարման սկլերոզ, մարտնչեցին ընդդեմ դարչնագույն ժանտախարի, պարերազմական հիպոերիա, հակասովետական հիպոերիա, գիտնականների մեծ բանակ, ծանր հրե-տանի, մեկնարկային տարի, հաջողության հիմնական մայրուղի* բառակապակցություններում ընդգծված բառերը, որոնք ուսումնասիրողը ներկայացնում է որպես մասնագիտական բառեր, ասել է թե՛ գնահատողական և ոչ գնահատողական բառերից զատ բառախմբեր, իրականում տեղավորվում են այդ համակարգում: Ուստի մենք հակված ենք ԶՀՄ բառապաշարում ըստ գնահատողականության առանձնացնելու երկու խումբ՝ **գնահատողական** և **ոչ գնահատողական**: Առաջինները կրում են բացահայտ դրական կամ բացասական արժեքային երանգ, երկրորդները ուղղակիորեն չեն արտահայտում որևէ հստակ արժեքային դիրքորոշում:

ա) **Գնահատողական բառապաշար**: Գնահատողականությունը ԶՀՄ լեզվում ունի սոցիալական, հանրային հիմքեր, այսինքն՝ ստեղծվում է հանրային կարծիքի հիման վրա: Լրագրողը կամ հասցեագրողը այս դեպքում հանդես է գալիս որպես հասարակական կարծիքի կամ որևէ հանրային խմբի (կուսակցություն, հասարակական կազմակերպություն ևն) շահերի ու հետաքրքրությունների արտահայտիչ: Որպես այդպիսին՝ կարող են գործածվել բառապաշարի ամենատարբեր շերտերին պատկանող և ամենատարբեր ոճի բառեր՝ հնաբանություններ, բարբառային բառեր, ժարգոն, նորաբանություններ ևն: Ընդ որում, գնահատողականությունը մեղիալեզվում, ինչես ասվել է, որպես կանոն ունի անմիջական, ուղղակի դրսևորումներ: Գնահատման ոլորտը նույնպես շատ ընդարձակ է. թիրախ կարող են դառնալ ամենատարբեր բնագավառի անձեր կամ երևույթներ՝ սկսած միջազգային հարաբերություններից մինչև առանձին անհատներ ու նրանց վարքագիծը, որը այս կամ այն կերպ, այս կամ այն չափով առնչվում է հանրային կյանքի ու կեցության հետ: Գնահատականները բնականաբար լինում են դրական կամ բացասական: Եվ ըստ այդմ՝ գնահատողական բառերի շերտը

բաժանվում է դրական իմաստ և բացասական իմաստ արտահայտող տեսակների:

Դրական իմաստ արտահայտող բառեր: Միտված են ընթերցողի մեջ առաջացնելու դրական վերաբերմունք քննարկվող առարկայի կամ երևույթի և կամ անձի նկատմամբ: Հիմնականում գրական-գրքային ծագում ունեցող բառեր ու արտահայտություններ են: Խոսքիմասային առումով հիմնականում ածականներ են կամ առարկայի ու գործողության հատկանիշ անվանող այլ բառեր՝ *հաջող, նպաստակալին, հաշվեկշռված, համբերատար, անգնահատելի, ազգանվեր, հայրենասեր*, դրանցով կազմված բառակապակցություններ՝ *առաջընթաց շարժում, իր գործի նվիրյալ, հմուտ մասնագետ, նոր ձեռքբերումներ, անսահման նվիրում, հերոսական ոգի, հայրենասնվեր գործ* ևն: Դրանք հաճախ են գործածվում պաշտոնական հաղորդումներում, ուղերձներում, այլևայլ բնագավառներում հաջողության հասած անձանց ուղղված խոսքերում և, առհասարակ, գնահատողական բովանդակություն ունեցող տեքստերում, ինչպես՝ «**Հոյակապ** մարզիկներ ունենք և շատ գոհ ենք նրանցից....» (sport.news.am; 03.02.2021), «Մխիթարյանը **հիանալի** հարվածով գրավեց «Վերոնայի» դարպասը» (alplus.am; 01.02.2021), «Հայ ժողովրդի ոգին **աննկուն** է, հավատը՝ **աներեր**, ուժը՝ **անսպառ**» (lin.am; 28.05.2021), «Բժիշկները պարտադրված պատերազմի դաշտում անօրինակ **հերոսություն** ու **սխրանք** ցուցաբերեցին» (armenpress.am; 21.07.2014):

Բացասական իմաստ արտահայտող բառեր: Հայերենը չունի լրագրային լեզվի հաճախականության բառարան: Սակայն ամենապանցիկ դիտարկումն անգամ կարող է վկայել, որ ԶՀՄ լեզվում գերակշռում են ոչ թե դրական, այլ բացասական իմաստ ունեցող բառերը: Սա պայմանավորված է լեզվաբանական, հաղորդակցական և հոգեբանական մի շարք գործոններով: **Նախ**՝ բացասական բառերը ուշադրություն գրավելու միջոց են. հոգեբանորեն մարդիկ ավելի արագ արձագանքում են վտանգին, սարսափին, բարկությանը կամ սպառնալիքին, քան դրական զգացումներին: **Ապա**՝ բացասական գնահատականը ավելի ներգործուն է դարձնում խոսքը, իսկ մեղիամիջոցները իրենց թույլ չեն տա հրաժարվել լսարանի վրա ներագդելու լեզվական այդ հզոր գործիքից: **Ապա**՝ բացասական տեղեկատվությունը ունի ավելի բարձր ընթերցելիություն, ինչը մղում է լրատվության միջոցներին գործածելու բացասական բառապաշար, սենսացիոն վերնագրեր: **Հետո**՝ ժուռնալիստիկայում բացասական իրադարձությունները (պատահար-

ներ, աղետներ, հանցագործություններ) և, առհասարակ, բացասականություն, հակառակություն, հակամարտություն, անսովորություն արտահայտող փաստերն ու երևույթները հաճախ ավելի արժանի համարվում են լրատվության:

ԶՀՄ լեզվի այս ուղղվածությունը շատ ավելի է ընդգծվում, երբ հասարակության մեջ գերակշռում են անվստահությունը, անարդարության զգացումը, տնտեսան և քաղաքական ճգնաժամերը. մամուլը բնականաբար անդրադառնում է այդ խնդիրներին, և ուստի լեզվական արտահայտչամիջոցները օբյեկտիվորեն ստանում են բացասական հուզական երանգ. մեդիալեզուն մի մեծ չափով սոցիալական-հուզական դաշտի արտացոլումն է:

Սա ընդհանուր միտում է. բնորոշ է ոչ միայն հայկական ԶՀՄ-ին: Մեր օրերում հայկական ԶՀՄ բացասական գնահատողականությունը մեծ չափով ուժգնանում է՝ պայմանավորված վերջին գործոնով: 2018-ի իշխանափոխությունից հետո անսխալաբեր աճ եղավ բացասական բառերի գործածության: Հասարակությունը երկու հակադիր բևեռների տրոհելու քաղաքականությունը տարավ ծայրահեղ հակասական ու անգիշում քննադատության, որը լեզվական մակարդակում իրացվեց և իրացվում է գերազանցապես բացասական գնահատողական բառերով: Եվ եթե դրան հավելենք նաև պատերազմում կրած մեր պարտությունը, հազարավոր զոհերը, Արցախի կորուստը, միջազգային ասպարեզում մեր կրած դիվանագիտական պարտությունները, քաղաքական և սոցիալական կյանքի անհեռանկարը, ու այդ ամենով պայմանավորված՝ նաև ընդդիմադիր ԶՀՄ-ի առատությունը, ապա շատ ավելի պարզ կդառնա հայկական մեդիալեզվում բացասական գնահատողական բառերի անսովոր գերակայությունը:

Բացասական գնահատողական բառերի գործածության չափը, իհարկե, մեծապես պայմանավորված է նաև թեմատիկայով, հեղինակի անհատականությամբ և լեզվական ու արտալեզվական այլևայլ գործոններով:

Բացասական գնահատողականություն արտահայտող բառապաշարային միջոցներից են առաջին հերթին այն բառերը, որոնք իրենց իսկ բառարանական իմաստով ունեն բացասական կցորդ՝ բացասական հարանշանակությամբ (կոնոտացիայով) բառեր, որոնք իրենցով արտահայտում են բացասական վերաբերմունք կամ ընկալում (*սաղեղ, սարսափելի, անպարասխանալու, կոռումպացված, այլանդակ, անօրինական, սև, վիճելի, անվստահելի, կաշառակեր, թալանչի, անյուրեն-*

վար, սրիկայություն, դավաճանություն ևն): Օրինակ՝ «Հայաստանի **դավաճան** իշխանությունը, **անկարող** Ռուսաստանը և **երկերեսանի** Արևմուտքը» (7or.am; 05.01.2023), «Ադրբեջանական կողմը ստորաբար **ստում է**» (news.am; 24.01.2014), «Ադրբեջանական կողմը շարունակում է իր **սադրիչ** վարքագիծը» (azatutyun.am; 16.12.2020), «Ադրբեջանի հարձակումը **նողկալի է...** վեց զինծառայողների գերեվարումը **զզվելի է**» (armeniatoday.am; 27.05.2021), «Տեղական **շուստրին. Սրիկայություն է** 2021 թ. ընտրություններին խոստանալ մի բան, կառավարության ծրագրում ամրագրել մեկ այլ բան, իրականացնել լրիվ ուրիշ բան» (168.am; 27.07.2023):

Բացասական իմաստներ են արտահայտվում զանազան կենդանանուններով (ոչխար, անասուն, կոկորդիլոս, կով, շուն, սողուն) կամ նրանց վերաբերող (լափել, հաչել, սողալ, լպստել, լիզել, թաթ, ոհմակ, կապիկություն, մագիլ, ժանիք, ճանկ) անվանումներով: Օգտագործվում են հեգնական, նվաստացնող վիրավորական կամ արժեզրկող նպատակով: Օրինակ՝ «**Բորենիների** դարաշրջանը, ում կառավարումը արյամբ է գրված, ուզում են կրկնել՝ բախման տանել» (armtimes; 03.05.2022); «**Այուծների** պատերազմը **բորենիների** դեմ նոր է սկսվում» (azg.com; 10.04.2021); «Փաշինյանի ուղեղին հասու չեղավ, որ Արցախը հակառակորդի **երախը** տալով՝ Մայր Հայաստանը չի կարող փրկվել» (azg.am; 23.09.2023); «Փողոցային թափառական **շան** կյանքով ապրած, ձախողված ու անհաջողակ արարածները ստված **շնագայլերի** պես հարձակվեցին «Հայաստան» համահայկական հիմնադրամի վրա» (Live24.am; 16.04.2021), «**Ակուլաների հետ՝ ալկուլաների պես**» (blognews.am; 03.04.2021), «Ի՞նչ եք քաղաքական **կապիկություն** անում. ո՞վ էր ասում՝ նոր պատերազմ՝ նոր տարածքներ» (168.am; 01.08.2023):

բ) **Ոչ գնահատողական** կամ **չեզոք բառապաշար**: Ապահովում է հաղորդման տեղեկատվական հենքը՝ զերծ մնալով բացահայտ վերաբերմունքից կամ արժեքային գնահատականից: Չի պատկանում ոճական որևէ շերտի (գեղարվեստական, պաշտոնական, հոետորական ևն): Դրանք ընդհանուր գործածական կամ, ինչպես ընդունված է ասել, համագործածական բառեր են, ինչպես՝ *որոշել, հայտնել, հանդիպել, հայտարարություն, ծրագիր, իրադարձություն, քննարկում, լսումներ, Ազգային ժողով* ևն: Ստեղծում է օբյեկտիվության տպավորություն, ինչը հատկապես կարևոր է ավանդական լրատվության միջոցների համար:

Տեքստում դրանք ընկալվում են նախ և առաջ իրենց այդ առաջնային՝ բառարանային իմաստներով: Համեմատության համար բերենք

միննույն նյութի վերաբերյալ տարբեր լրատվության միջոցների կարճ հաղորդման (վերնագրի) չեզոք և գնահատողական տարբերակներ՝ համապատասխան վերլուծությամբ.

1. «Վարչապետ Փաշինյանը հանդիպել է ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հետ» (*Armenpress.am*; 15.08.2023).

2. «Պուտին-Փաշինյան հանդիպումը հայ-ռուսական հարաբերությունների ամրապնդման նոր փուլ» (*yerkir.am*; 15.08.2023).

3. «Փաշինյան-Պուտին հանդիպում. խոսարումներ՝ առանց կոնկրետ քայլերի» (*Armlur.am*; 15.08.2023):

Առաջինի լեզուն չեզոք է, պաշտոնական. գնահատողականությունը բացակայում է. վերնագիրը պարզապես արձանագրում է փաստը՝ առանց որևէ գնահատականի կամ մեկնաբանության. նպատակը տեղեկատվության չեզոք փոխանցումն է՝ առանց ընթերցողի ընկալումը ուղղորդելու:

Երկրորդը ակնհայտ դրական գնահատողական բնույթ ունի. գործածվում է «ամրապնդման նոր փուլ» արտահայտությունը, որը շեշտադրում է հանդիպման կարևորությունը և դրական արդյունքները. նպատակը հանդիպման և դրա հնարավոր արդյունքների վերաբերմամբ ընթերցողի մոտ դրական վերաբերմունք ձևավորելն է:

Երրորդում գնահատականը բացասական է, հեգնական. ենթադրվում է, որ հանդիպումը արդյունք չի տվել, և ներկայացված խոստումները չեն ուղեկցվել կոնկրետ գործողություններով. նպատակը հանդիպման արդյունավետության նկատմամբ քննադատական վերաբերմունք ձևավորելն է:

Հայտնի է, սակայն, որ նույնիսկ թվացյալ չեզոք բառապաշարը կարող է թաքնված գնահատողականություն արտահայտել՝ արժեքավորելով (պարզապես հայտնելով) որոշ փաստեր և անտեսելով մյուսները (Ջորջ Լակոֆ): Չկա բառային միջոցների միջամտություն: Այսպես, օրինակ՝ «Երևանի քաղաքապետարանի մասնաշենքերից մեկում խուզարկություն է կատարվում» (*azg.am*; 31.05.2025): Տեքստում բացակայում է ուղիղ մեկնաբանություն կամ բացահայտ դիրքորոշում: Օգտագործված է փաստը անմիջականորեն հաղորդելու ձև՝ առանց ածականների, արտահայտիչ բառերի կամ գնահատականների, բայց այստեղ կա գնահատողական երանգ: Այսպես՝ «խուզարկություն» բառը թեև չեզոք տերմին է, բայց բերում է բացասական ասոցիացիաներ՝ կապված իրավախախտումների, հանցագործությունների հետ: Այն ինքնին պարունակում է ենթադրյալ կասկածի կամ խախտման իմպլի-

կացիա: Տեղանքի հիշատակումը՝ «Երևանի քաղաքապետարանի շենքերից մեկում», կոնկրետացնում է ենթադրյալ խնդիրը՝ դա կապելով պետական կառույցի հետ. ենթատեքստը կարող է ընդհանրացնել՝ «քաղաքապետարան=կոռուպցիա»:

Շարունակական գործողության կերպը («կատարվում է») ընթերցողի մեջ ստեղծում է արդիականության կամ հրատապության զգացողություն՝ լարվածություն: Դա կարող է ազդել հուզական դաշտի վրա՝ ակամա ձևավորելով գնահատական: Այսպիսով՝ նույնիսկ առանց բացահայտ կարծիքի՝ լեզվական «չեզոք» միավորը կարող է ստեղծել գնահատողական ֆոն: Մեղիալեզվում չեզոքությունը հաճախ խախտվում է տեքստային միջավայրում բառային միջոցների օգնությամբ կամ այլ եղանակով (տե՛ս «Համատեքստ և գնահատողականություն»):

Գնահատողական երանգի փոփոխությունը մեղիալեզվում և հանրային խոսույթում հաճախակի հանդիպող երևույթ է: Տեղի է ունենում բառի իմաստային տեղափոխության գործընթաց, որի շրջանակում սկզբնապես չեզոք կամ դրական նրբիմաստ ունեցող բառերն աստիճանաբար ստանում են նոր՝ բացասական գնահատողական երանգ: Այս երևույթը պայմանավորված է ոչ միայն ներլեզվական գործոններով, այլև համատեքստի դինամիկ փոփոխություններով, քաղաքական կյանքի իրադարձություններով և հանրային ընկալումների վերաձևավորմամբ: «Բառերը, որոնք սկզբնապես ունեն չեզոք դեմոտատիվ իմաստ, կարող են ստանալ գնահատողական կոնոտացիաներ, եթե մշտապես գործածվում են որոշակի քաղաքական կամ սոցիալական ենթատեքստում» (**Mickiewicz C.** Langage me'diatique et valeurs. Presses Universitaires de Lyon, 2010): Այսպես, օրինակ՝ «անասնագողություն» բառը, որը սկզբնապես և այսօր էլ սովորական գործածության մեջ ունի չեզոք իմաստ՝ որպես հանցանքի անվանում, որոշ հասարակական-քաղաքական խոսույթներում սկսել է գործածվել փոխաբերական նշանակությամբ՝ կապվելով քաղաքական այս կամ այն գործչին (դեպուտատ, ավագանու անդամ ևն) իր ձամբարից «առևանգելու» գործընթացի հետ: Բառի այդ նոր՝ գնահատողական իմաստը ակտիվ շրջանառության մեջ դրվեց Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ և դրան հաջորդած ժամանակաընթացում՝ քաղաքապետի ընտրություններին, երբ մի քանի կուսակցական անդամներ, դավաճանելով իրենց քաղաքական թիմին, անցան հակառակորդի կողմը: Ահա բառի՝ այդ իմաստով գործածության մի քանի օրինակներ՝ «Երբ ասում եք**անասնա-**

գողություն՝ հիշեք, որ նա մեր խմբակցությունից է եկել ձեզ մոտ» (araratnews.am; 07.12.2023), «Միավորվեցին, որ դառնան մեծամասնություն, բայց էլի չստացվեց, մի հատ էլ «անասնագողություն» արեցին ...» (hrapararak.am; 04.07.2024), «Նա նաև հիշեցրեց, որ «Հանրային ձայն» առաջին օրվանից եկավ ընտրեց Ավինյանին, այնտեղից տեղի ունեցավ **անասնագողություն**, հիմա էլ գալիս քվորում են ապահովում» (hayeli.am; 07.02.2024), «Քաղաքական **անասնագողություն** Գյումրիում...» (168.am; 18.04.2025):

Նման կերպ նաև *հեղափոխություն, ակրիվիստ, հպարտ (քաղաքացի), վերափոխում, (եվրոպական) արժեքներ, «դուխով», թավշյա, «դեմոկրատիա», ազատամարտիկ, երկրապահ* և այլ բառեր իրենց չեզոք կամ հարգալից բովանդակությունից զատ ձեռք են բերել խոսույթային երկրորդ շերտ՝ արտահայտելով սարկազմ, քաղաքական հեգնանք կամ մանիպուլյացիոն ենթատեքստ: Այդպիսի փոփոխությունները վկայում են, որ մեդիալեզուն ինքնուրույն կերպով ձևափոխում է բառերի իմաստաարժեքային բեռը՝ հաճախ հակադրվելով բառարաններում արձանագրված ավանդական իմաստներին: Արդյունքում ձևավորվում է ոչ միայն լեզվական արժեքային նոր համակարգ, այլև հանրային ընկալումների խոսույթային նոր կառուցվածք:

Օտարաբանություններ: Խոսակցական լեզվում և երբեմն նաև գրականում հաճախ գործածվող օտար բառերը ունեն յուրահատկություն՝ սեղմ և դիպուկ գնահատությամբ բնութագրել իրողությունը: Այս դեպքում օտարաբանության գնահատողական նրբերանգը դառնում է շատ ակնառու և տպավորիչ, ինչպես՝ «Միացյալ Նահանգները միջազգային քաղաքականության դերակատարների «**ռևիզիա**» է անցկացնում» (lin.am; 23.03.2025). այստեղ ընդգծված բառը շատ ավելի լայն բովանդակություն ունի, քան նրա հայերեն **ստուգում** կամ **վերանայում** չեզոք տարբերակը: Ունի նաև բացասական գնահատողական երանգ՝ *անհարկի և հեղհոդական վերստուգում՝ հավաքաքննություն, որ հանգեցնելու է բացասական հեղհանքների*: Մեկ այլ օրինակ՝ «Նման մարդուն ընդդիմադիր համարելու համար մեծ **ֆանտազիա** է պետք» (Հ2; 19.03.2025). օտար բառի հայերեն *երևակայություն* համարժեքը, իհարկե, չէր ունենա այն գնահատողական շեշտված երանգը, ինչ օտար բառը. ոչ միայն շեշտվում է բառի բառային նշանակությունը, ուշադրություն է գրավում, այլև ստեղծում է հեգնանք: Կամ՝ «Մենք այնքա՛ն երկար ենք ապրել **ԿԱԳԵԲԵ**-ական խաբեությունների ազդեցության տակ, որ այժմ երազում ենք բացարձակապես ոչ մի տարակույս չունե-

նալ շարքային...» (azg.am; 24.08.2018), «Պետք է «ԿԱԳԵԲԵ»-ի ստվերից դուրս գալ, բարեփոխումներ պետք է իրականացնենք» (factor.am; 09.12.2022). ԱԱԾ և ԿԱԳԵԲԵ հապավումները, հայտնի է, նույն հիմնարկի անվանումներ են, սակայն երկրորդը՝ ռուսերեն տարբերակը (комитет гос. безопасности), ժամանակակից լսարանի կողմից ընկալվում է բացասական երանգով, քանի որ այն խորհրդանշում է սովետական կարգերին բնորոշ արատավոր երևույթները: Ախրանա-ն օտար և չեզոք գնահատությամբ բառ է, ունի հայերեն համարժեքներ՝ *պահպանություն*, *պահակախումբ*: Համատեքստում կարող է ձեռք բերել հեզնական գնահատողական երանգավորում՝ «Փաշինյանի **ախրանան** կրկին դեսանտ է իջեցրել Սյունիքում» (hraparak; 09.05.2025): Այլ օրինակներ՝ «Փաշինյանի **ֆուտյարն** էր մասնակցում Մոսկվայում մայիսի 9-ի միջոցառմանը» (24.05.2025), «Քրեական մշակույթը և **կաստյում-շավարով իդյոտները**» («Հրապարակ»; 17.05.2025), «**Տեռորիստ** չէր գտնվում Մայր տաճարում, որ այդ **ֆորմատով** ներխուժեցիք. հայտնի փաստաբանը...» (iravunk.am; 28.07.2025):

Անորոշ նշանակության բառեր: Երբեմն գործածության մեջ են դրվում բառեր, որոնք իբրև թե գնահատողական բովանդակություն ունեն՝ դրական կամ բացասական, մինչդեռ դրանք մի տեսակ անորոշ նշանակության ցուցիչներ են, ըստ իրադրության՝ կարող են ձեռք բերել որոշակիության նրբերանգներ, մինչդեռ հաղորդողը գործածում է իր իրական մտքերը քողարկելու կամ լսարանին պարզապես մոլորեցնելու համար: Դա ունի մանիպուլյացիոն նպատակ: Վերջին շրջանում հայկական ԶՀՄ-ում և հատկապես հայ քաղաքական խոսույթում լայնորեն տարածված այդպիսի բառերից են՝ *հիքրիդային*, *տեսլական*, *մոդերապոր*, *խոսույթ*, *նարարիվ*: Օրինակ՝ **տեսլական** բառը (հիմքում՝ **տեսիլ**՝ պատկեր, երազ, «միրաժ», ցնորական պատկեր՝ կերպարանք) առավելապես ածական է, և նշանակում է *երևակայական*, *երևութական*, *ոչ իրական*, *տեսիլք հանդիսացող*; *իդեալական*, *ոչ երկրային*, *եթերային*, *վսեմ*: Վերջին տարիներին արևմտահայերենի ազդեցությամբ արևելահայերենում իբրև թե ձեռք է բերել *հայեցակետ*, *հայեցակարգ*, *տեսակետ*, *մրարիպար*, *պարկերացում* (անգլ.՝ **vision**) գոյականական նշանակություն: Բայց դա այնքան անորոշ ու անհստակ է հայերենում, որ դրա ենթադրվող դրական նշանակությունը խոսքում չի գիտակցվում, չի ընկալվում լսարանի կողմից. ԶՀՄ-ում և տարբեր խոսույթներում գոյականական իմաստով գործածությունները դժվարությամբ են ըն-

կալվում նյութական/առարկայական նշանակությամբ: Կարդում ենք. «Ըստ սահմանման՝ ռազմավարությունը և տեսլականը երկարաժամկետ հասկացություններ են: Մարդիկ, բիզնեսները և կազմակերպությունները հաճախ մշակում են ռազմավարություններ, **իսկ երկիրը կամ ազգերկարո՞ղ է արդյոք ունենալ տեսլական կամ ռազմավարություն:** Արդյո՞ք Ֆրանսիայի, Կանադայի կամ Մեծ Բրիտանիայի նման երկրներն ունեն ռազմավարություն և, եթե՝ այո, ապա որտե՞ղ է այն արտացոլված» (hraparak.am; 06.08.2021): Իզուր չէ, որ իր հարցումի երկրորդ հատվածում հեղինակը հրաժարվել է **տեսլական**-ից:

Հիբրիդային (հայերեն՝ **խառնածին**) տերմինի հիմքում **հիբրիդ** կենսաբանական տերմինն է («տարբեր տեսակների՝ ցեղերի ևն պատկանող կենդանիների կամ բույսերի խաչավորումով ստացվող օրգանիզմ»): Խիստ գրավիչ և պահանջվող փոխաբերական նշանակությամբ՝ բառը մեծ չափով ընդլայնել է իր գործածությունը ամենատարբեր խոսույթներում՝ հանդես գալով որպես զանազան բառակապակցությունների լրացնող բաղադրիչ՝ *հիբրիդային պատերազմ, հիբրիդ(ային) ուսուցում, հիբրիդային ծրագրեր, հիբրիդային դասընթաց, հիբրիդային սպառնալիք, հիբրիդային կայան, հիբրիդային մրաժողություն, հիբրիդային աշխատանք, հիբրիդային էլեկտրակայան, հիբրիդային սպառնալիք* ևն: Բայց, ցավոք, այն հաճախ գործադրվում է երևույթի բուն բովանդակությունը լսարանից թաքցնելու, դրա բացասական և կամ դրական նշանակությունը բողբոջելու նպատակով: Օրինակ՝ եթե *հիբրիդային մեքենա, հիբրիդային շարժիչ* բառակապակցություններում բառիս նշանակությունը շատ հստակ է (բենզինի և էլեկտրականության համատեղումով աշխատող), ապա նույն բառի նշանակությունը *հիբրիդային պատերազմ* կապակցության մեջ շատ անորոշ է կամ, առնվազն, խիստ իրադրային է: Այսպես՝ «**Հիբրիդային պատերազմ.** Նիկոլ Փաշինյանի հորինվածքը» (hraparak.am; 30.03.2025), «*ՌԴ-ն հիբրիդային պատերազմ է վարում ՀՀ դեմ՝ 5-րդ շարասյուն, հաքերային հարձակում.* ԵՄ անդամ լինելով՝ կապահովագրվենք» (factor.am; 21.06.2021), «Տեղեկատվական դաշտում Հայաստանի Հանրապետության դեմ*հիբրիդային պատերազմ,* տեղի ունենում: Այս մասին այսօր՝ սեպտեմբերի 22-ին....» (news.am; 23.10.2023): Եվ որքան էլ այս նոր հասկացությունը ռազմագիտական գրականության մեջ լուսաբանվում է («**Հիբրիդային**»*պատերազմ* (անգլ.՝ hybrid warfare) տերմինը շրջանառության մեջ է դրվել 20 դարի վերջին ԱՄՆ-ում՝ ռազմական դոկտրինը բնորոշելու համար, և քննարկումների առարկա է դարձել մշտապես), միննույն է, կոնկրետ կիրառության մեջ այն լրացուցիչ բա-

ցատրությունների կարիք ու անհրաժեշտություն ունի, եթե իհարկե, տերմինը չի գործածվել ակնարկության (hint) միտումով, ինչը, ի դեպ, ավելի հաճախ է տեղի ունենում: Այս դեպքում արդեն հատուկ մեկնաբանություններ չեն ենթադրվում, և գնահատման իրավունքը միտումով վերապահվում է անորոշության մեջ հայտնված լսարանին: Իսկ սա արդեն մանիպուլյացիոն հնարք է:

Ծանոթություն: Այսպիսի բառերով «գայթակղվելը» երբեմն հանգեցնում է ոչ ճիշդ բառագործածության: Բուն պարճառը, իհարկե, բառի իրական իմաստի չիմացությունն է կամ, միգուցե, նաև զգոնության պակասը: Հաճախ հանդիպող օրինակներից բերենք ընդամենը մեկը: **Առերևույթ** բառը արդի հայերենի բառարաններում արձանագրված իր բազմաթիվ իմաստներից և ոչ մեկով չի նշանակում ակնհայտ; ակներև; այն, ինչ իրականում այդպես չէ, բայց թվում է այդպես: Ընդհակառակը. ունի փրամագծորեն հակառակ իմաստներ՝ թվացյալ, խաբուսիկ, երևութապես, անիրական, երևակայական, երևութական, արտաբուս, թվացող, արտաքին փափկություն: Այսպես՝ «առերևույթ հանցակազմ» նշանակում է ոչ թե իրական, հավաստի, ակներև հանցակազմ, այլ թվացյալ, ենթադրելի, ոչ իրական հանցակազմ, այսինքն՝ նախնական փվյալները թույլ են տալիս կարծել, բայց դա դեռ ապացուցված չէ: Եվ ահա մեղիահարթակներում լրագրողները կամ հարցազրույցի ոչ մասնագետ, իսկ երբեմն էլ հենց մասնագետ մասնակիցը, իր խոսքին իրավագիտական առանձնակի երանգ հաղորդելու մղումով փոգորված, լուրջ փորձության է ենթարկում իրեն այդ բառը գործածելիս: Օրինակ՝ «Աղբբեջանում **առերևույթ** ձերբակալվել են Ռուսաստանի Դաշնության քաղաքացիներ մի քանի անձանց նկատմամբ լրբեսության մեղադրանքով» (hayeli.am; 07.07.2025). ընդգծված բառը ակնհայտորեն գործածված է **բացահայտ(որեն)**, **իրականում** կամ նույնիմաստ մեկ այլ բառի փոխարեն և նշանակությամբ, հակառակ դեպքում հաղորդումը կեղծ է ու անփրամաքանական, քանի որ խոսվում է մի ձերբակալության մասին, որը իրականում տեղի էր ունեցել և այն էլ շատ կոշտ ուժի կիրառմամբ, և ինչն էլ հենց ուզում է արձանագրել զրուցակիցը:

Այլ օրինակներ՝ «Ձայնագրության**առերևույթ**ումը հանգեցնում է հետևյալ եզրակացության՝ ԱՄԾ պետը հետաքրքրվում է այդ գործի հիմնավորվածության և օրինականության փաստով» (168.am; 21.09.2018); «Պարզվել է «Հայինկասացիա» ՓԲԸ-ից առանձնապես խոշոր չափերով **առերևույթ** գողությունկատարած անձի ինքնությունը: Վերջինս հան-

դիսանում է նշված ընկերության վարորդը» (aravot.am; 21.04.2019); «**Առերևույթ** կեղծ տեղեկություններ պարունակող փաստաթղթերը ներկայացվել են ՀՀ առողջապահության նախարարություն և պետքույնից ստացել փոխհատուցում» («Հայկական ժամանակ»; 30.07.2021); «Ստիպված եմ ուղղակի մեջքերումներ ներկայացնել Սահմանադրական դատարանի որոշումից, որից պարզ է դառնում, որ ՀՀ գլխավոր դատախազին **առերևույթ** ձիշտ չեն ներկայացրել Սահմանադրական դատարանի որոշումը» (168.am; 12.06.2019); «**Առերևույթ** փաստաթղթերի կեղծմամբ, խարդախությամբ խոշոր չափերով հափշտակություն կատարելու հերթական դեպքն է բացահայտվել» («factor.am; 25.05.2024»);

Իմաստափոխությունը բառիմաստաբանության մեջ հաճախ հանդիպող երևույթ է. լեզվի պատմական զարգացման ընթացքում բառը ձեռք է բերում նոր իմաստ՝ պահելով կամ կորցնելով նախկին իմաստը, ինչպես՝ **իմաստակ**. սկզբնապես նշանակել է *փիլիսոփա, իմաստուն*, իսկ այժմ՝ *թերուս, անգետ*, կամ՝ **հավուր պատշաճի** (յաւուր պատշաճի). բառացի նշանակել է *ըստ օրվա հարմարության՝ պատշաճի, ըստ իրավիճակի, օրվա պահանջներին համապատասխան*, այժմ՝ *ըստ պատշաճի*, ըստ *ընդունված կարգի*, նաև՝ *ըստ ամենայնի*: **Առերևույթ**-ի պարագայում շրջանառվող իմաստը (ակնհայտ, ակներև, բացահայտ) չի դարձել նորմ, չունի հանրային ընկալում, արձանագրված չէ բառարաններում, հետևաբար դասական իմաստով չի կարող համարվել իմաստափոխություն: Այդ բառիմաստի սխալ կիրառության հնարավոր վտանգները (սկսած հանրային սխալ ընկալումից մինչև իրավական ծանր հետևանքներ) առերևութական չեն, ակներև են: Լսարանի հնարավոր սխալ ընկալումներից խուսափելու համար ըստ անհրաժեշտության կարելի է՝ 1. Խոսքում ներդնել պարզաբանող արտահայտություններ («Առկա են առերևույթ (թվացյալ) ապացույցներ, որոնք ենթակա են քննության»), 2. Բառը փոխարինել ավելի հասկանալի բառով («առերևույթ հանցագործություն»>«թվացյալ հանցագործություն», «կան առերևույթ հիմքեր»>«կան նախնական հիմքեր»):

Հանրային խոսքում և ԶՀՄ-ում հանդիպում են անձիշտ բառընտրության, բառագործածության, բառակազմության այլ դեպքեր (տե՛ս **Ավետիսյան Յու., Սարգսյան Ա.** և այլք, 2016): Գնահատողականությունն արտահայտվում է նաև **բառային այլ միջոցներով՝**

* *միևնույն բառի բազմիմաստությամբ՝* «Լարախաղացի *բալանսավորում* է այն, ինչն անվանում են *բալանսավորված* քաղաքականություն» (168.am; 11.05.2025),

* **խոսքային հսկանիշներով**՝ «ԱՆԻՖ –ի Մոսկվայի մասնաճյուղը 5 տարում 6,9 մլն դոլար է ստացել; *ձախողում ու խայրառակություն, թե՛ «ռեյդերային զավթում»* (hetq.am; 14.03.2025), «Ի՞նչ կապ ունեն ԱՆԻՖ–ը, Դելավերի օֆշորային ընկերությունները և Տիգրան Ավինյանի կնոջ ընկերուհին» (hetq.am; 14.03.2025),

* **նույնարմատ բառերի իմաստային հակադրությամբ**՝ «Իմպիչմենտը այլևս քաղաքական օրակարգ է. սրան *ընդդիմանում են* ավելի շատ *ընդդիմադիր* պատգամավորները» (24news.am; 11.05.2025), «Մանդատող *դի՞ր, ըրդիմադիր*» (news.am; 11.10.2024), «*Թե՛ մարդակեր, թե՛ մարդամոր* արջեր են հանդիպում Եղեգիսի փողոցներում» («5-րդ ալիք; 10.05.2025»),

* **բառի՝ բառարանային իմաստի հակառակ իմաստով**՝ «Մեր *ամենաժողովրդավար* դեմոկրատիկը գնահատական է տվել» (LIVENews.am; 03.04.2025),

* **լեզվական տարասեռ միավորների հակադրությամբ**՝ բարձր և ցածր *ոճի բառեր/բառաձևեր*՝ «Ու վստահ եղեք, որ իր *ժեխը կիրախձանի*» (aravot.am; 05.12.2020), «*Գզվորոց հաճախորդաց հարեմուն*» (7or.am; 14.06.2021), «*Հակակոռուպցիոն կոմիտեն* մանր ժուլիկություններ է սկսել (blognews.am; 30.03.2025), «....Խնդրում եմ *թարգեք*, իրական ու *տրիկնանցից* քիչ տարբերվող *պարոնայք*» (blognews.am; 12.06.2025),

* **ժարգոն+վարչաբանություն+ օտարաբանություն+են կադապարով**՝ «Գերազանցիկ *նախարարի «կռուտիտի»*, կազմաքանդված ու բարոյալքված *իրավական համակարգի* ու նրանց *գլխին կարգված դիլեման*ը «ասիշի» մասին» (168.am; 03.04.2025),

* **հայերեն բարբառային բառ + օտարաբանություն կադապարով**՝ «Բացի այդ, *ջրջանել էին* բոլոր այն փողոցները, որոնց ասֆալտին *դիպնելու էին Նորին գերազանցություն* Սերժ Ազատովիչ Սարգսյանի՝ մեր փողերով առած ու մեր փողերով *իրան տուղա-սյուղա՝* կարմիր ժապավեն կտրելու տանող ավտոների *կալոսների* ռետինե *ներքանները*» (armtimes.com; 22.10.2014) ևն:

2.2. Գնահատողական լեզվական այլ միջոցներ

Գնահատողականության դրսևորման մեջ կարևոր դեր ունեն ոչ միայն առանձին բառերը, այլև ավելի բարդ լեզվական միավորներ՝

դարձվածքներ, արտահայտչական կառուցվածքներ, որոնք գնահատականը դարձնում են ավելի հուզական և տպավորիչ:

Դարձվածքներ: Գնահատողականությունը դարձվածքների մեծ մասի իմաստային հիմնական հատկանիշն է. ունեն անթաքույց բացասական կամ դրական գնահատողական երանգ: Դարձվածքի փոխաբերական իմաստը շատ ավելի է ընդգծում այդ երանգը: Ըստ որում, գնահատողականությունը առավել հատուկ է ժողովրդական ծագում ունեցող դարձվածքներին՝ *էջի ականջում քնել; շան օրը գցել; աչքի գրող; երկու դռան շուն, կարմիր կովը կաշին չի փոխի; էջ կերել, էջ մեծացել է; յանը փարած; ա-ն ու ք-ն չջուկել; մազը՝ երկար, խելքը՝ կարճ; գրողի փարած; ցամաք ձորի աղվես* ևն, ևն:

Ինչպես գնահատողական բառերի դեպքում, այստեղ նույնպես գերակշռում են բացասական երանգ ունեցողները: Եվ դա նկատելի է ոչ միայն լրագրողների, սովորական օգտատերերի, այլև խմբագիրների ու քաղաքական վերլուծաբանների խոսքում: Օրինակ՝ երկու քաղաքական գործիչների քառասուն րոպեից ավել տևած զրույցում կողմերից միայն մեկը (ռազմաքաղաքական վերլուծաբան) գործածեց մեկ տասնյակից ավելի դարձվածքներ՝ համեմված ժարգոնաբանություններով ու բազմաթիվ խոսակցական ձևերով՝ «Աջ ձեռքը չգիտի՝ ձախն ինչ է անում», «Էս ինչ խուժան կուպե ենք ընգել», «Ժողովրդին վարի են տալիս», «Ինչպես ասում են՝ բանը հասավ դիվան բաշուն», «Ստավկեն Իմամօղլուի վրա է. քեզ քցելու են, Էրդողան», «Քավության նոխազ են դարձրել Հովիկ Աղազարյանին և ստրախ են գանյատ անում նրա նկատմամբ», «Նման գնմանն գտանե», «Հաստատ սրանք ուռած են» ևն (LIVEnews.am; 25.03.2025): Լեզվական այսպիսի միավորների կուտակումը հատկապես էլեկտրոնային մամուլում և զանազան կայքէջերում լսարանի վրա հաճախ թողնում է հակառակ ներգործությունը: Վերը նշված դեպքում քաղաքական ճանաչված վերլուծաբանի իսկապես խելացի դատողությունները դարձան պարզունակ, անարտահայտիչ ու վանող:

Դրական վերաբերմունքի արտահայտիչներ կարող են լինել ոչ միայն բովանդակությամբ անմիջաբար դրական իմաստ արտահայտող դարձվածքները (աչքի լույս, ձեռք մեկնել, նեցուկ լինել, ուղի հարթել ևն), այլև դարձվածքներ, որոնք խոսքից դուրս ունեն չեզոք նշանակություն: Դարձվածքի այսպիսի գործածությունը թույլ է տալիս լրագրողին պահպանել արտաքուստ չեզոքություն, բայց միաժամանակ ներ-

կայացնել իրադարձությունները կամ գործիչներին դրական լույսի ներքո: Այսպիսի գործածությունը նպաստում է ազդեցության և կարծիքի ձևավորմանը՝ առանց բացահայտ սուբյեկտիվության, այսպես՝ «Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը մշտապես **ուշադրության կենտրոնում է պահում** քննչի շուկայում տեղի ունեցող գնային տատանումները» (aravot.am; 05.010.2023), «Հոգնածությունն **իր դերը խաղաց**.....» (aysor.am; 12.04.2017), «Հայաստանն այդ ընտրություններով լուրջ **քայլ կատարեց** դեպի առաջ.....» («Հայկական ժամանակ»; 26.04.2017):

ԶՀՄ լեզվում, ինչպես տեսանք, միևնույն չեզոք բառը կամ բառակապակցությունը կարող է գործածվել և՛ դրական, և՛ բացասական գնահատողությամբ՝ պայմանավորված խոսքային միջավայրով: Սա բնորոշ է նաև դարձվածքներին: Ահա այդպիսի գործածության օրինակներ (**առաջինները** բացասական գնահատողական ընկալում ունեն, **երկրորդները**՝ դրական)՝

* «Զբացահայտված ահաբեկչությունը մեր պետականության, ինքնիշխանության պակասի ամեն օր ահազանգն է: 1999-ի հոկտեմբերի 27-ը **հիմք դրեց** ինքնիշխանության կորստին» (hraparak.am; 16.05.2025) և «Եվ **դրանով** նաեւ **հիմք դրվեց** Արցախի Պաշտպանության բանակի ձևավորմանը», (kizaket.am; 09.05.2025);

* «ԲՊ-ի Գյումրիի թիմի պառակտվածությունն **իր դերը խաղաց**» (hraparak.am; 18.010.2021) և «Ռուսաստանի ՊՆ հայտարարությունը դրական ազդակ է: Կարծում եմ՝ հանրային դժգոհությունն **իր դերը խաղաց**» (168.am; 27.03.2022);

* «Մի ամբողջ հասարակություն, հետևելով «քայլ արա» կարգախոսին, անդառնալի **քայլ կատարեց** դեպի անդունդ» (168.am; 12.06.2021) և «ԱՄՆ նախագահը երախտագիտություն հայտնելով Կիմ Չեն Ընին պատմական օրվա համար, նշել է, որ աշխարհը մեծ հետընթաց **քայլ կատարեց** միջուկային աղետից» (hraparak.am; 16.05.2025);

* «Առավոտյան ժամը 7-ին ամենավայրի ձևով մեր տուն են ներխուժել ԱԱԾ հատուկշոկատայինները՝ **մինչև ատամները գինված**: Բոլորիս պառկեցրել են գետնին.....» (168.am; 03.13.2024) և «**Մինչև ատամները գինված** անեցիները լքեցին իրենց քաղաքը եւ Սեւ ծովի երկու ափերով, ճանապարհին հայկական նորանոր բնակավայրեր հիմնելով՝ հասան Լեհաստան.....» (azg.am; 23.09.2023):

Չեզոք լեզվական միավորի երանգավորված գործածությունը նուրբ և կարևոր ոճական գործիք է մեղիալեզվում: Այդպիսով պահպանվում է

օբյեկտիվության տպավորությունը, ինչը կարևոր է հատկապես լուրերում, ներդրվում է գնահատողական իմաստ, առանց ուղղակի գնահատականի, այսինքն՝ ներգործող գործառույթը ակտիվանում է ներակայորեն. առանց հատուկ նշույթավորումի՝ լրագրողը կարողանում է ազդել ընթերցողի ընկալման վրա՝ պահպանելով օբյեկտիվության արտաքին շղարշը: Սա նաև մեղիալեզվին բնորոշ ներգործող և հաղորդող լեզվատարրերի հավասարակշռման վառ օրինակ է:

Դարձվածքի գնահատողական բնույթը շատ ավելի է շեշտվում **դարձվածքային փոփոխություններով**: Հարցին անդրադարձել են շատերը, հատկապես՝ օտար լեզվաբանները (Ե. Բողրովա, Ն. Բոժկո, Տ. Գերմաշևա, Ե. Օգուցևա, Ի. Տրետյակովա և այլք): Եվ ընդհանուր կարծիքն այն է, որ ներդարձվածքային փոփոխությունը աչքի ընկնող լեզվական հնարներից է խոսքի ներգործուն ուժը զորացնելու համար:

Լեզվաբանական նորագույն գրականության մեջ առանձնացվել են դարձվածքային փոփոխության տարբեր ձևեր ու տեսակներ: Առանձին աշխատանքներում խոսվում է նույնիսկ փոփոխությունների տասից ավելի տեսակների մասին (Дегальцева А. В., 2023): Ա. Դեգալցևան դարձվածքային փոփոխություններում առանձնացնում է երկու ընդհանուր տեսակ՝ **ձևային** և **իմաստային**: **Ձևային** դրսևորումներ է համարում փոխարինումը, բաղադրիչի հավելումը կամ կրճատումը, բակառությունը (կոնտամինացիա): **Իմաստային** դրսևորումներից առանձնացնում է իմաստի տառացիացումը (բուկվալիզացիա), որ է դարձվածքի ուղիղ իմաստով կամ ուղիղ և փոխաբերական իմաստներով համատեղ գործածությունը (իմաստների կրկնակի արդիականացումը): Ըստ նրա՝ դարձվածքային փոփոխությունների կեսից ավելին իմաստային է (տե՛ս նույն տեղը):

Այս տարբերակումը, մեր կարծիքով, խիստ պայմանական կարող է համարվել, քանի որ իրականում դարձվածքի ձևային փոփոխությունը, ի վերջո, առավել կամ պակաս չափով առաջ է բերում նաև իմաստային փոփոխություն: Եվ դարձվածքային փոփոխության նպատակն էլ հենց դա է. ձևային փոփոխություններով ակտիվացնել դարձվածքի գործառական-ոճական հնարավորությունները: Այդ իսկ պատճառով մեզ առավել նպատակահարմար է թվացել դարձվածքային փոփոխությունների տեսակներն անվանել **իմաստային և ձևաիմաստային**: (Վերջինի մեջ պետք է ներառել նաև բաղադրիչների շրջուն շարադասությունը): Դա առավել համոզիչ է թվում նաև, երբ վերլուծում ենք հայկական ԶԸՄ-ում հանդիպող դարձվածքային փոփոխությունները:

1. Իմաստային փոփոխություն: Ունի իր տարատեսակները.

ա) Իմաստի կրկնակի ակտիվացում. փոփոխության ամենից հաճախ հանդիպող տեսակներից է: Մեր կարծիքով՝ «լեզվական խաղ» հասկացության մեջ կարող է տեղավորվել փոփոխության միայն այս տեսակը, որը իրապես հենվում է լեզվական համանուն միավորների իմաստային զուգորդությունների և իմաստային խաղի վրա: Ուղիղ իմաստը՝ մի կողմից, դարձվածքային-փոխաբերականը՝ մյուս կողմից: Դարձվածքային բառակապակցության երկու՝ ուղիղ և փոխաբերական իմաստների միաժամանակյա գործածությամբ ընկալելի են դառնում երկու իմաստները: Օրինակ՝ «Գլուխը ցավում է. դեղ է խմել: Ուրիշ մի բան էլ կա՝ գլուխը քոր գալը: Գլուխը քոր գալու դեպքում դեղը չեն խմում, քսում են: Հիմա դժվար է ասել՝ գլուխը ցավո՞ւմ է, թե՞ գլուխը քոր է գալիս» (5-րդ ալիք: 28.03.2025). ակնարկը («գլուխ քոր գալ»՝ *սսես ծեծվել ուզել*) վերաբերում է մեկին, ով խոսում է իր գլխացավի և դեղ խմելու մասին՝ իրական գլխացավը մեղմելու համար, բայց և միաժամանակ անում է շատ վտանգավոր, վիճահարույց և իր իսկ համար խնդիրներ ստեղծող հայտարարություններ, որոնք կարող են համապատասխան հակազդեցություն առաջացնել: Կամ՝ գործավարական խորհրդակցության ժամանակ քաղաքապետի արտաբերած խոսքերը լրագրողը մեկնաբանում է «լեզվական խաղով»՝ «Նա *հունից դուրս է եկել*, և խոսքը հասել է *հունից դուրս հոսող* կոյուղաջրերին» (Հ2; 09.06.2025):

բ) Բառացի ընկալում (ռուս. буквализация—բառացիացում). սա դարձվածքային կապակցության՝ միայն ուղիղ իմաստով գործածությունն է, այսինքն՝ դարձվածքը հանդես է գալիս ոչ թե իր վերառված՝ փոխաբերական իմաստով, այլ բառացիորեն՝ որպես սովորական բառակապակցություն: Բաղադրիչների ուղիղ, ելակետային իմաստի վրա հիմնված կիրառություն է: Օգտատերը սպասում է շատ ծանոթ դարձվածքի դարձվածքային իմաստով կիրառությանը, բայց ունենում է բառակապակցության ուղիղ իմաստ, որը աշխուժություն, թարմություն է հաղորդում իր անսպասելիությամբ: «**Հազար տարի առաջ** երկրաշարժից, սելջուկների և ապա մոնղոլների արշավանքներից, այնուհետև բուզանդացիների խարդավանքներից, Վեստ Սարգիսի եւ Պետրոս Գետադարձ կաթողիկոսի դավաճանություններից հետո Անիից հեռացող 100 հազար հայերի անգոր գայրույթն ու հուսահատ անեծքը հավանաբար նույն դառնությունն ունեին, ինչն այսօր ունի արցախահայությունը, ինչն ունենք մենք բոլորս» (azg.am; 23.09.2023):

2. Ձևախմբաբանական փոփոխություն: Այս տեսակի դրսևորումներից են՝
ա) Դարձվածքային բաղադրիչ(ներ)ի փոխարինումը այլ բաղադրիչով՝ հոմանիշով կամ հակահիշով, գրական կամ խոսակցական տարբերակով, հնացած կամ նոր, դրական կամ ժխտական՝ «Դատավոր որդին քաղաքապետ հորից մազ չունի կամ **պտուղը ծառից հեռու է ընկել**» («Պտուղը ծառից հեռու չի ընկնում») (hraparak.am; 20.10.2014), «**Կարկուտը ծեծած տեղը էլի ծեծեց**» («Կարկուտը ծեծած տեղն է ծեծում») («Հայկական ժամանակ»; 27.05.2014), «Ա. Հակոբյանը **կոխվ է գցել** Շանթ դաշինքի «տունը» («Հրապարակ»; 18.05.2025), «**Ջրի բերածը հարկայինը** կտանի» («Ջրի բերած, ջրի տարած»)(irates.am; 13.06.2017):

բ) Բաղարկությունը (կոնտամինացիա): Միախառնվում են տարբեր դարձվածքների բաղադրիչները: Երկու դարձվածքներից ստեղծված կապակցություն, որը ունի փոխաբերական իմաստ՝ «Ջոն Պրեսկոտն ադրբեջանցիներին կոչ է արել **ուրիշի աչքի փուշը տեսնելու** փոխարեն **հանել սեփական աչքի գերանը**» (armenpress.am; 06.10.2011):

գ) Առկախում (էլիմինացիա): Բաղադրիչներից մեկը կամ դարձվածքի մի մասը բաց է թողնվում: Մտածել է տալիս: Ստեղծում է երկիմաստություն: Բաց թողած տարրը խթանում է ընկալումը, քանի որ հասցեատերը որոշակի ջանք է գործադրում այն հասկանալու համար: Օրինակ՝ «**Սայլը ճռռալու փոխարեն...** Բաքուն Երևանին ապակառուցողական դիրքորոշման մեջ է մեղադրել» (news.am; 22.01.2020). հայտնի դարձվածքի («Սայլը ճռռալու տեղ՝ սելվորն է ճռռում») հատվածական գործածությունը ընթերցողին ներքաշում է համատեղ մտածելու՝ ինչ է որոճում Բաքուն, երբ Երևանը համբերատար, առանց դժգոհելու փորձում է շրջանցել նրա բոլոր խարդավանքները: Այլ օրինակներ՝ «Ինչով էլ կյանքի կկոչվի **հաղթողներին դապելու**» («Հաղթողներին չեն դատում»,—Յու. Ա.) պրակտիկան՝ եթե նրանք **խախտել են կարմիր գծեր**» (hraparak.am; 7.10.2024), «**Գայլի գլխին՝ ավետարան**» («Գայլի գլխին ավետարան են կարդում, ասում է՝ ոչխարը սարը բարձրացավ», — Յու. Ա.). համանախագահող երկրների ղեկավարները Ալիևի գլխին խաղաղության մասին քարոզ կարդացին, վերջինս ասաց....» (avangard.am; 14.05.2025), «Սակայն մյուս կողմից՝ չի կարելի մեղադրել միայն մեկ երկու ուժի ու **ձեռքերը լվանալ**» («Ես ձեռքերս լվանում եմ այս անմեղի արյունից»՝ Պիդատոս, — Յու. Ա.), դատավորի կարգավիճակ ստանձնել եւ կրնկակոխ հետեւել խորհրդարանական ընդդիմության պահվածքին» (hayeli.am; 17.10.2021), «**Մի ձեռքով քանի՞ ձմերուկ**» («Մի ձեռքով երկու ձմերուկ բռնել», — Յու. Ա.)(azg.am; 12:04:2019):

րում: Քիչ է հանդիպում լրատվական ժանրերում, գրախոսություններում (Дегальцева А. В., 2023): Հայերեն մեդիամիջոցների լեզվի ուսումնասիրությունը նույնպես այդպիսի արդյունքներ է ցույց տալիս, և դա տրամաբանական է, քանի որ ընդգծված գնահատողականությունը և հուզարտահայտչական նկատելի լիցքը, որն ունի ինքսին դարձվածքը, կամ որը արտահայտվում է նրա զանազան փոփոխություններով, բնորոշ է վերլուծական-գնահատողական խոսքին:

Դարձվածքային փոփոխություններով հեղինակը նպատակ ունի ավելի անմիջական շփում ստեղծելու լսարանի հետ և իհարկե ավելի ուժեղ ներագդելու նրա վրա: Դարձվածքը կայուն լեզվական միավոր է, և նրա հետ կապված յուրաքանչյուր փոփոխություն անմիջապես աչքի է զարնում, և ստեղծվում է յուրահատուկ լեզվական միջավայր, որը և դառնում է ուշադրության անմիջական առարկա: Դա էլ լրագրողի նպատակադրումն է. ուշադրություն գրավել, շեշտողաբար առանձնացնել ասելիքը և ներգործել ընթերցողի/օգտատիրոջ վրա:

Փոփոխությունների բնույթն ու տեսակը շատ առումներով պայմանավորված են նաև հրատարակության կամ հաղորդակցման միջոցի տեսակով, լսարանի սոցիալական և ինտելեկտուալ մակարդակով, հեղինակի անհատականությամբ, նպատակադրումով ևն: Պարզվում է, օրինակ, որ դարձվածքային փոփոխությունները ավելի հաճախ հանդիպում են մեծ լսարան ունեցող և ոչ մասնագիտական՝ անհամասեռ հասցեատեր ունեցող լրատվության միջոցների նյութերում: Պատճառն այն է, որ դարձվածքային փոփոխությունները այդպիսի ԶՀՄ-ներում միջոց են իրականացնելու գաղափարական և լեզվամշակութային «զտում», որի նպատակն է չվանել լսարանին, պահպանել վստահություն, գաղափարական տարածքում ապահովել կայունություն: Տարածված են հանրային հեռուստատեսությունում, ազգային մակարդակի ԶՀՄ-ում, միջազգային լրատվական հարթակներում: Փոքր լսարան ունեցող մեդիամիջոցները, որպես կանոն, չեն խուսափում ուղիղ գնահատականներից, քանի որ ունեն համախոհների լսարան: Դարձվածքային հաջողված փոփոխությունը ստեղծագործական աշխատանք է, որ հեղինակից պահանջում է լեզվական շնորհք, մտավոր կարողություններ, փորձառություն, սուր դիտողականություն ևն: Եվ դա ավելի հատուկ է կրեատիվ, ակտիվ-ստեղծագործական բնավորություն ունեցող լրագրողին:

Լեզվաբանական գրականության մեջ ընդունված է այս երևույթը դասել «լեզվական խաղերի» շարքը, որը նպաստում է ժամանակա-

կից մեդիախոսքի ներքմբռնողականության զարգացմանը (ինտելեկտուալիզացիային): Դժվար է վստահաբար ճիշտ համարել այս պնդումը, քանի որ «լեզվական խաղի» հատկանիշներ ունեն, ինչպես ասացինք, դարձվածքային միայն որոշ փոփոխություններ:

3. Արտահայտչական-պատկերավորման միջոցներ

Ասվեց, որ մեդիալեզուն ունի կոնկրետ գնահատողական բնույթ, այսինքն՝ որպես կանոն՝ հեղինակը արտահայտում է իր վերաբերմունքը խոսքի առարկայի նկատմամբ ուղղակիորեն՝ առանց քողարկումների: Սա ընդհանուր գործող կանոն է: Գնահատողականությունը ունի նաև մեկ այլ դրսևում: Լրագրողը և, առահասարակ, ցանկացած հեղինակ հաճախ դիմում է նաև, այսպես կոչված, քողարկված միջոցների, որոնք կարելի է անվանել վերաբերմունքի արտահայտման ներակա միջոցներ: Դրա որոշ դրսևորումների մասին խոսեցինք: Բայց այն հետաքրքիր արտահայտություններ ունի լեզվի նաև արտահայտչական-պատկերավորման համակարգում:

Մեղմացում (մեղմասություն. հուն.՝ euphemi. eu – լավ, phemi – խոսում եմ): Ներակայումով գնահատման դրսևորումներից է: Գործում է որպես անուղղակի արտահայտման եղանակ. Հաղորդողի վերաբերմունքը փոխանցելու միջոց է՝ առանց ուղղակի գնահատական տալու: Արտաքուստ պահպանում է չեզոքության պատրանքը, բայց իրականում փոխանցում է վերաբերմունքային շերտ: Օրինակ՝ «*«Իմ քայլը» դաշինքը պեպք է վերանայի իր որոշումը...* Այն, ինչ արվեց Արցախում, հիմա արվում է Գազայում». «սխալ է», «անարդյունավետ է» ասելու փոխարեն՝ օգտագործվում է մեղմ շեշտադրում՝ «վերանայել» տարվող քաղաքականությունը: Մեկ այլ օրինակ՝ «Նա որոշակի **թերացումներ** ուներ կառավարման ոլորտում» (Armenpress.am; 18.12.2024). ընդգծված բառը, որը գործածվել է *անգործություն, անպարասխանսարվություն* կամ *ձախողում* բառերի փոխարեն, մեղմացում է քննադատությունը՝ այն դարձնելով ավելի չեզոք: «Ոստիկանության արձագանքը *ժամանակին չէր*» (hetq.am; 05.010.2023). ընդգծվածը բացասական իրավիճակը ներկայացնում է մեղմացված՝ խուսափելով ավելի խիստ գնահատականից՝ *ուշացրել էր*: Մեղմացումը չեզոքության պահպանման, նուրբ քննադատության գործիք է, ինչը հատկապես բնորոշ է պաշտոնական կամ անկախ լրատվության միջոցի լեզվին:

Կոպտասացություն (կոպտաբանություն. անգլ.՝ dysphemism – կոշտ խոսք): Գնահատողական հակառակ ուղղվածություն ունի. արտահայտության ազդեցիկ ու գործուն միջոց է: Կիրառվում է, երբ միտում կա շեշտադրելու վերաբերմունքը, ընդգծելու դեպքի լրջությունը կամ քննադատության սրությունը: Օրինակ՝ «Քաղաքական այս քայլը **բացահայտ անտեսում է** օրենքը, մարդկանց իրավունքներն ու արժանապատվությունը» (CivilNet.am; 10.11.2023). ընդգծված կապակցության փոխարեն «շրջանցում է»-ն կմեղմեր մեղադրանքի աստիճանը: Ակնհայտ սրացման միջոց է նաև «իրավունքներն ու արժանապատվությունը» գուգադրությունը: Այլ օրինակ՝ «Սա ոչ թե թերացում էր, այլ **պետական մասշտաբի խայտառակություն**» (yerkir.am; 15.02.2024). ընդգծված կապակցությունը կտրուկ բարձրացնում է բացասկան գնահատականը: Կոպտասությունը առավել հատուկ է կուսակցական «կախյալ» մեդիամիջոցին, ընդդիմության լրատվության միջոցներին:

Կոպտասությունը առավել հաճախ է հանդիպում ցանցային լեզվում, որտեղ այն ընդգծվում է ոչ միայն բառային, այլև ձևաչափային միջոցներով՝ մեծատառով, կոպիտ լեզվով, կարճ բառակապակցություններով, առանձնանում է շեշտված հուզականությամբ: Օրինակ՝ «Սա ոչ թե անմեղսունակություն է, այլ **ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍԱՐՈՏԱԺ**: Ո՛ր են իրավապահները, թե՞ սրանք բոլորիս վրա թքած ունեն» (Facebook; օգտատեր, հոկտեմբեր, 2024). Գլխատառերով գրության ձևը շեշտողականության ամենատարածված միջոցներից է. ընդգծում է բառի զգայական հագեցվածությունը, «քաղաքական սաբոտաժ»-ը փոխարինում է «անարդյունավետ կառավարում» ձևակերպումին, «ուր են իրավապահները» հռետորական/ցուցադրական հարցումը ունի կանխավ քննադատական ենթատեքստ, հուզական ուժեղ դրսևում է ընդհանրացումը՝ «բոլորիս վրա թքած ունեն»: Այսպիսի ոճը բնորոշ է ցանցային և հաճախ «պոպուլիստական» հռետորաբանությանը, որը էապես կարող է ազդել լսարանի վերաբերմունքի ձևավորման վրա:

Հեգնանք (անգլ.՝ irony, հուն. բառացի՝ «ձևական պարզամտություն»): Գրքային-վերամբարձ արտահայտությունը խոսակցականի, բարբառայինի հետ զուգակցված կամ բառի՝ հակառակ նշանակությամբ գործածությունը ստեղծում են ընդգծված հեգնական բացասական երանգ: Խոսքային միջավայրով պայմանավորված՝ դրական գնահատականը ընկալվում է որպես բացասական: «Արցախը չհանձնվեց, հանձնեցին մերօրյա սարգիսները, սկսյալ այն պահից, երբ լքեցին Քառինտակը, հրաման տվեցին լքելու Շուշին, այնուհետև Աղավնոն, Սու-

սը, Բերձորը, մյուս բնակավայրերն ու դիրքերը, հանուն... **խաղաղության»** (azg.am; 23.09.2023): Կամ՝ «**Երեկ տեսանյութ տարածվեց, որում երևում էր, որ Հայաստանի Հանրապետությունում ամեն ինչի գիտակ Դանիել Իոանիսյանի բարեփոխված ոստիկանության՝ ամերիկյան գումարներով ու մեթոդներով կրթված պարեկները 4 շաբաթ խցանման մեջ կանգնած մեքենաներից մեկի վարորդին, վայրենու պես հարձակվելով, քաշելով.... զցեցին գետնին.... Ներքին գործերի նախարարից երեկոյան նախ 168.am-ի՝ ի՞նչ է կատարվում տեսանյութում, և ինչո՞ւ են պարեկներն այդքան «բարեկիրթ» հարցերին ի պատասխան՝ ասացին....: Այս գրառման ներքո ակնթարթորեն հայտնվել էր Դանիել Իոանիսյանը և հայտնել իր հեղինակավոր, անբեկանելի կարծիքը» (168.am; 03.04.2025): «**Ասուլիսային քաջության** կուրախանար ցանկացած դատարկաբան» (Facebook; 2023). **Ասուլիս** և **քաջություն** հասկացությունների հեգնական համադրությունը ենթադրում է ձևական, ոչ իրական խիզախություն՝ ընդգծված քննադատական գնահատողական ենթատեքստ:**

Հեգնանքով գնահատողականություն են ստեղծում որոշակի սպասարկու բառեր ու արտահայտություններ՝ *այսպես կոչված, ասել է թե, իբրև թե, ում*: Օրինակներ ԶՀՄ-ից՝ «Բաքվում ընթացող, *այսպես կոչված*, «դատավարությունները» չեն կարող դիտարկվել որպես արդար և անկողմնակալ դատարանի կողմից իրականացվող» (alplus.am; 17.01.2025), «Ամոթ ՄԱԿ-ին, *ումն* Ալիև ձեր հանդեպ արհամարհանքով է խոսում, Փաշինյանն էլ ասում էր՝ վտանգ չկա: ՄԱԿ-ը չի կարող անտարբեր մնալ, երբ որևէ պետություն...» (yerkir.am; 17.01.2025), «*Այսպես կոչված խաղաղության պայմանագրի* փաստաթուղթը չի երաշխավորի, որ Ադրբեջանը պատերազմ չի սկսի Հայաստանի դեմ: Այս մասին NEWS.am-ի....» (Armenia News.am; 17.01.2025), «Դժվար չէ ենթադրել, որ *այսպես կոչված «խաղաղության* պայմանագիրը» դարձել է «*խաղաղության* համաձայնագիր» նորից Ադրբեջանի պահանջով» (Pastinfo.am; 19.03.2025):

Ծանոթություն: Հեգնանք և բացասական գնահատում ենթադրող «այսպես կոչված» ներդրյալ կապակցությունը գործածելիս հեգնական գնահատականը (վերևի օրինակներում՝ **դատավարություն-ը**), չպետք է առնված լինի չակերտների մեջ, քանի որ հեգնանքը արդեն իսկ արտահայտված է ներդրյալ կապակցությամբ: Հեգնական գնահատականը առնվում է չակերտների մեջ, եթե չի գործածվում «այսպես կոչված»-ը:

Գնահատողականությունը դրսևորվում է նաև արտահայտչական այլ միջոցներով.

* **համեմատություն.** արդյունավետ միջոց է հատկապես, երբ օգտագործվում է ոչ թե փաստերի պարզ հակադրության, այլ արժեքային հակադրությունները բացահայտելու համար՝ «Իշխանության համար հարկերի հավաքումն ավելի օրակարգային է, քան Ցեղասպանության ճանաչումը» («Ժողովուրդ»; 10.05.2025), «Փաշինյանն իրեն պահում է փողոցային խուլիգանի նման» (hraparak.am; 09.05.2025);

* **չարահյուսական ժխտում.** հաճախ գործածվում է ոչ միայն փաստերի ժխտման համար, այլև որպես բացասական գնահատման գործիք՝ մեղմ կամ անուղղակի կերպով արտահայտելով անվստահություն, հեզմանք կամ մերժում. ստեղծում է իմաստային հակադրություն՝ առանց բացահայտ գնահատողական բառերի՝ «Մեր պետության հիմնասյուներից մեկը հայագիտությունն է. պետք է **ոչ թե** թուլացնել, **այլ** հզորացնել այն» (hetq.am; 21.01.2019), իսկ երբեմն էլ՝ արտահայտում է շեշտված ժխտողականություն՝ «Փաշինյան, հզոր տղա ես ուզում երևա՞մ. դու ոչ մեկն ես, որ նախագահները հետո բան քննարկեն» (24news.am; 11.05.2025);

* **դարձվածքային հակադրությո.** հականիշ դարձվածքների գործածությամբ ընդգծվում է բացասական գնահատականը՝ «Երեկվա առյուծի կաթ խմած գազանը համեստ հարսի պես նստած է Կրեմլում» (hraparak.am; 09.05.2025);

* **թվական րվյալների հակադրություն.** «ՀՀ զբոսաշրջության ոլորտը նպատակ ունի 20% աճ գրանցել, սակայն 2025-ի առաջին եռամսյակում 9,6%-ով նվազել է» («Ժողովուրդ»; 10.05.2025);

* **ճարտասանական հարց.** թույլ է տալիս անուղղակի կերպով արտահայտել խոստովի վերաբերմունքը. այդ հարցերն ակնկալվող պատասխան չունեն, քանի որ դրանց միջոցով շեշտադրվում է արդեն ակնհայտ կարծիք կամ դիրքորոշում՝ «Ինչո՞ւ ձախողվեց Հայաստանի անվտանգային համակարգը» (hraparak.am; 09.05.2025), «Դասագրքում **ոչ**մի բառ չկա Էրեբունի-Երևան կապի մասին, ո՞ւմ է ձեռնադրված քարոզչությունն առաջ տանելը» (yerkir.am; 03.06.2025) ևն:

Վերնագրեր: Գնահատողականությունը շատ հաճախ ցայտուն է արտացոլվում վերնագրերում: Վերնագիրը կատարում է ոչ միայն տեղեկատվական, այլև գնահատողական գործառնությո՝ ուղղորդելով լսարանի նախնական վերաբերմունքը: Չեզոք վերնագիրը գայթակղիչ չէ: Իհարկե, կան այնպիսիք, որոնք երկիմաստ են, չեն հուշում հեղինակի նախընտրությունները, ինչպես՝ «Օձն իր պորտով, հավքն իր թևով»

(hraparak.am; 10.12.2014); «Պատանի հանդիսատեսի թատրոնում սպասում են նախարարին» (hraparak.am; 13.05.2025): Բայց որպես կանոն, վերնագիրը հուշում է նյութի բովանդակության և հեղինակի գաղափարական կողմնորոշումների մասին: Դա բնորոշ է վերլուծական ժանրերի վերնագրերին: Գնահատողական երանգ ունեն, օրինակ, հետևյալ վերնագրերը՝ «Իշխանությունը նոր հողեր է հանձնում» (hraparak.am; 13.05.2025), «Խզումը խորանում է», «Եվրոպացի երիտասարդները Հայաստանի կամավորության վառ ուղիներում» (azg.am; 03.05.2025), «Բանավեճը՝ «դաճաղի» վերջին մեխ» («Հայկական ժամանակ»; 08.05.2025):

4. Համատեքստ և գնահատողականություն

Մեդիախոսություն բառապաշարը գնահատողական և չեզոք շերտերի դասակարգելը խիստ պայմանական է, քանի որ գործածության համատեքստը հաճախ սրբագրում կամ վերաիմաստավորում է բառի գնահատողականությունը: Որոշ չեզոք բառեր կարող են ստանալ արժեքային երանգ՝ կախված համատեքստից: Լեզվաբանական առումով՝ տեքստը կարող է ունենալ երեք մակարդակ՝ 1. **Փոքր համատեքստ** (միկրոկոնտեքստ)՝ նախադասությունը կամ պարբերությունը: 2. **Ամիջական համատեքստ** (տեքստային համատեքստ)՝ ամբողջ տեքստը կամ հաղորդագրությունը: 3. **Ընդլայնված համատեքստ** (մակրոկոնտեքստ)՝ այն ամենը, ինչ դուրս է լեզվական նյութից, բայց ազդում է նշանակության ընդլայնման վրա:

Բառարանային նշանակությամբ շատ չեզոք բառեր գնահատողականություն են ձեռք բերում տեքստի հենց առաջին երկու մակարդակներում: Դրական կամ բացասական վերաբերմունքի արտահայտիչներ են դառնում ոչ միայն հենց այդպիսի բովանդակություն ունեցող բառերը, այլև այլ լեզվական միավորներ, որոնք զուտ լեզվական մակարդակում չեզոք են (*ցուցադրել, ապահովել, ներկայացնել, գործել, նախաձեռնություն, միջամտել, դառնալ, մասնակցություն* ևն), սակայն փոխաբերորեն կամ համատեքստի և ձևակերպման միջոցով ստանում են գնահատողական երանգ՝ առանց բացահայտ գովեստ կամ բացասում պարունակելու: Սրանք հատկապես կարևոր են լսարանի ընկալման վրա նրբորեն կամ քողարկված ազդելու համար: Օրինակ՝ **ներդրում** բառը բառարանային նշանակությամբ («նյութական կամ ոչ նյութական ներդրված ռեսուրս») չեզոք է. դրական համատեքստում ունի կառուցողական, նախաձեռնողական դրական իմաստ, ինչպես՝

«Թրամփը *մեծ ներդրում* կունենա մեր տարածաշրջանում հակամարտությունների և առկա խնդիրների խաղաղ կարգավորման գործում» (lurer.com; 22.01.2025): Կամ՝ **մասնակցել**–ը չեզոք բայ է, սակայն եթե համատեքստը դրական է (մրցույթ, նախաձեռնություն, հանրային կարևորություն), բայը ստանում է գնահատողական երանգ, օրինակ՝ «Խնդրում են ապրիլի 23–ին **մասնակցել** ջահերով երթին՝ դրանով իսկ ձեր ձայնը լսելի դարձնել ու բռնացքվել՝ հանուն Հայաստանի ու Արցախի» (news.am. 21.04.2022): Այլ օրինակներ՝ «ՀԱՊԿ–ն գործնականում **ցույց տվեց** իր ներուժը, օպերատիվ գործելու ունակությունը» (lin.am; 10.02.2022), «Ծիծեռնակաբերդի բարձունքի անխնամ մնացած տարածքը **անտառային գոտու** է վերածվել» (24news.am; 15.05.2025): **Քայլ**–ը բառարանային ուղիղ իմաստով չեզոք է («ոտքի մեկ շարժում՝ տեղափոխություն առաջ, հետ կամ կողք»), բայց ահա խոսքային շրջապատում այն կարող է արտահայտել և՛ դրական, և՛ բացասական նշանակություն, ինչպես՝ «Այսօր ևս մեկ *կարևոր քայլ* արվեց Հայաստանի բարձր տեխնոլոգիական ոլորտի համար. ստորագրվել է համագործակցության պայմանագիր «Աքսելերացիոն ծրագիր».... (news.am; 15.09.2024) և «Para.TV–ն հանդես է եկել նոր նախաձեռնությամբ՝ «**5 քայլ դեպի դավաճանություն**» խորագրով» (news.am; 10.11.2022):

Նույնիսկ դրական երանգավորում ունեցող բառը կարող է հանդես գալ բացասական նշանակությամբ: Իրացման ուղիներից մեկը, օրինակ, փոխաբերական կամ հեգնական գործածությունն է, ինչպես՝ «Այդ ներդաշնակ **համագործակցությունը** կողմերի համար ունեցավ աղետալի հետևանքներ», «Շատ **համախմբված** ենք գործում, դրա համար էլ այս օրին ենք հասել»: Օրինակներ ԶՀՄ–ից՝ «Այս տողերը չեն գրվում գործող վարչախմբի ու նրա **պետի** քաղաքական, մտավոր ու հոգեկան սնանկությունը եւս մեկ անգամ փաստելու նպատակով» (azg.am; 23.09.2023), «Այուշ *քաղաքականության երջանիկ* հպատակները... ինչպե՞ս են հազարավոր երիտասարդների հուղարկավորած ու հազարավոր քառակուսի կիլոմետրերով չափվող հայրենիքից զրկված ժողովրդի ներկայացուցիչներն իրենց համարում երջանիկ» (168.am; 25.03.2025), «Մեկը թշնամի է, մյուսը *դիտերիմ բարեկամ*. նրանց ձիրաններից դուրս գալ է պետք» (lin.am; 22.08.2022):

Լեզվաբանական դասական մոտեցումներում համատեքստը հաճախ սահմանափակվում է անմիջական տեքստային միջավայրով: Սակայն մեդիալեզվի, հաղորդակցական լեզվաբանության և տեքստի քննական վերլուծության ոլորտներում բառի գնահատողական երանգ–

ները երբեմն բացահայտվում են **ընդլայնված համատեքստում**: Այս տեսանկյունից չեզոք լեզվական միավորները գնահատողական երանգ (դրական կամ բացասական) կարող են ձեռք բերել՝ պայմանավորված ոչ միան իրենց տեղաբաշխման խոսքային միջավայրով, այլև արտա-լեզվական գործոններով, որոնցից կարևորագույններն են՝ *հաղորդման միջոցի քարոզչական-գաղափարական դիրքորոշումը, լրագրողի անհա-տական ոճը կամ ենթագիտակցական կողմնակալությունը, հասցեարի-րոջ՝ լսարանի ակնկալիքներն ու աշխարհայացքը, հաղորդման պահին տիրող պայմանաշակութային կամ քաղաքական իրավիճակը*: Այս գոր-ծոնները համարվում են ընդլայնված համատեքստի բաղադրիչներ. համատեքստը ընկալվում է ոչ միայն սոսկ լեզվական միջավայր, այլև հաղորդակցության սոցիալ-հոգեբանական ամբողջություն: Դրանցով պայմանավորված՝ բառը ձեռք բերում դրական կամ բացասական թաքնված գնահատողական իմաստ, այլև կարող է հանդես գալ «բազ-մակի» նշանակությամբ, և հետևապես լսարանին են «վերապահվում» կողմնորոշումը և ընկալումը: Օրինակ՝ **կիրառել**-ը չեզոք բառ է խոս-քային չեզոք միջավայրում (փոքր համատեքստում), ինչպես՝ «Կիրառել Սահմանադրությո՞ւնը, թե՞ օրենքը» (168.am; 26.06.2020): Երբ խոսքը նո-րարարության, արդյունավետության մասին է, ստանում է դրական ե-րանգ՝ «ՊԲ այսօրհաջողությամբ **կիրառել** է սկյութական մարտավա-րությունը» (Generalnews.am; 25.05.2025): Մինչդեռ նույն այդ չեզոք բառը իմաստային տատանումներ ունի հետևյալ հաղորդագրություններում. «Իլոն Մասկը առաջարկել է պարժամիջոցներ **կիրառել** ուկրաինացի օ-լիգարխների դեմ... Ուկրաինայում հակամարտությունն արագ կա-վարտվի, եթե ԱՄՆ-ը որոշի...» («Հայկական ժամանակ»; 09.04.2025) // «Մասկը կոչ է արել պարժամիջոցներ **կիրառել** «ուկրաինացի 10 խոշոր օլիգարխների» նկատմամբ. Politics. Մասկը Զելենսկիին առաջարկել է հեռանալ իշխանությունից ու լքել...» (armur.am; 18.04.2025) // «Մի-լիարդատեր Իլոն Մասկը, որը ղեկավարում է ԱՄՆ կառավարության արդյունավետության բարձրացման գերատեսչությունը, առաջարկել է պատժամիջոցներ կիրառել «ուկրաինացի 10 խոշորագույն օլիգարխնե-րի» նկատմամբ» (news.am; 09.03.2025): Բերված բոլոր հաղորդագրու-թյուններում ձևակերպումը, ըստ կառուցվածքի, չեզոք է. այն գրանցում է մեկ անձի գործողության փաստ: Սակայն կարող է տարբեր կերպ ըն-կալվել՝ ըստ կոնկրետ լրատվության միջոցի դիրքորոշման, լսարանի պատկերացումների և միջազգային իրադրության: Եթե լրատվության միջոցը արևմտամետ է, ուրեմն գնահատողական ընկալումը բացասա-

կան է (ամերիկյան արժեքներից շեղում), իսկ եթե ռուսամետ է, ապա Մասկը ընկալվում է որպես սթափ մտածող կամ հակաուկրաինական ձգտում ունեցող գործիչ՝ ճշմարիտ խոսքի կրող. ընկալումը դրական է: Եթե վերլուծական հարթակը չեզոք է, ապա ուշադրությունը կենտրոնանում է շահերի բախման վրա, և գնահատողական ընկալումը չեզոք է կամ երկիմաստ: «Հայկական ժամանակը» քաղաքական դիրքորոշմամբ իշխանամետ է, գաղափարախոսությունը հաճախ նույնականացվում է ներկա վարչակարգի հետ, ուստի հաղորդագրությունը ընկալվում է որպես հավաստի տեղեկություն, հնարավոր է՝ որպես իշխանության քաղաքականությանը ներդաշնակ տեսակետ: «News.am»-ի՝ որպես հիմնականում ընդդիմադիր դիրք ունեցող լրատվության միջոցի նույնությամբ տրված հաղորդումը ընկալվում է որպես կասկածի արժանի կամ քաղաքական նպատակով մատուցվող տեղեկություն: Այսինքն՝ ընկալումը տարբեր է ոչ թե տեքստի, այլ աղբյուրի նկատմամբ հասարակական վստահության ու կողմնորոշման հիման վրա:

Երբեմն գնահատողական նույն լեզվական միավորը մի լեզվակիրառողի խոսքում հանդես է գալիս դրական նշանակությամբ, մեկ ուրիշի խոսքում՝ ակնհայտորեն բացասական: Օրինակ՝ Ռուսաստան-Ուկրաինա հակամարտությունը ռուս լրագրողը և առհասարակ ռուսական ԶՀՄ-ն և քաղաքական վերնախավը հորջորջում է «հատուկ ռազմական գործողություններ ահաբեկիչների դեմ», իսկ ուկրաինական կողմը այն անվանում է «լայնամասշտաբ պատերազմ»՝ ուղղված երկրի ինքնիշխանության դեմ: ԶՀՄ-ում ՀՀ իշխող կուսակցությունը 2018-ի իշխանափոխությունը մատուցում է որպես «թավշյա, անցնցում, ժողովրդավարական հեղափոխություն», իսկ ընդդիմադիր քաղաքական ուժերը այն անվանում են «ադրբեջանաթուրքական բռնի հեղաշրջում»: Երկու դեպքում էլ առկա է երևույթի նկատմամբ գնահատողական հստակ վերաբերմունք, և այս դեպքում լսարանին է վերապահվում ըստ իրավիճակի, ըստ խոսքի ներգործության աստիճանի և, ինչու չէ, նաև ըստ սեփական փորձի ու անհատական ընկալման գնահատելու երևույթը: Գնահատողականությունը մեծ չափով պայմանավորված է լսարանի արժեքային համակարգով, աշխարհայացքով ու գաղափարական կողմնորոշումներով (**Вольф Е. М.**, 1986, N 5, 98-99):

Այլ օրինակներ՝ «Հայկական պատվիրակությունը հոկտեմբերի 13-17-ը Մարոկկոյում **մասնակցել է** ՆԱՏՕ-ի օպերատիվ կարողությունների հայեցակարգի (ՕԿՀ) տարեկան համաժողովին, հայտնում են Պաշտպանության նախարարությունից (azatutyun.am; 19.10.2024), «Իս-

րայելի պաշտպանության բանակն առաջին անգամ մարտական իրավիճակում *հաջողությամբ կիրառել* է «Հեց 3»» (azatutyun.am; 10.11.2023), «ԱՄՆ-ն նոր պատժամիջոցներ է *կիրառել* ռուսական «Գազպրոմի» նկատմամբ» (hraparak.am; 25.05.2025): Բոլոր այս հաղորդումներում առկա է գնահատողական ընկալման երկակիություն՝ պայմանավորված վերը նշած հանգամանքներով:

Սրանք գնահատողականության ներակա ձևեր են, որի առանձին դրսևորումներ ունեն մանիպուլյացիոն նպատակ, և որին հաճախ են դիմում լրագրողները, քաղաքական գործիչները իրենց բուն նպատակը քողարկելու համար: Երբեմն մանիպուլյացիան ունենում է ավելի խորքային՝ ընդհանրական համատեքստային բնույթ: Այսպես, օրինակ՝ **տատ** բառը գնահատողական որևէ երանգավորում չունի և՛ բառարանային մակարդակում, և՛ տեքստում՝ սովորական՝ չեզոք կիրառությամբ: Բայց ահա 5-րդ ալիքի լրագրողի կարճ հաղորդման մեջ («Կիմ **տատին** այսօր պիտի բաց թողնեին») ունի շեշտված գնահատողական բնություն՝ թաքնված, ենթատեքստային նշանակությամբ: Բանն այն է, որ Գյումրիի քաղաքապետի ընտրության օրը (2025 թ. մարտի 30) ընտրակաշառք վերցնելու, անօրինական գործողությունների համար իշխանությունները ձերբակալում են նաև երեք ընդդիմադիր տարեցների, որոնցից մեկն էլ 75-ամյա **Կիմյանն** է: Ընդդիմադիր ալիքի լրագրողը, սակայն, լրատվության մեջ չի նշում ձերբակալվածի անուն-ազգանունը, ինչը ավելի բնական և սպասելի կլիներ: Եվ լրատվության շարունակության մեջ էլ խոսվում է այլ տատիկ-պապիկների ձերբակալության մասին: Միտումը որոշակի է. անուղղակիորեն գնահատական է տրվում իշխանությունների գործողություններին՝ զարգացնելով այն միտքը, որ իշխանությունը դիմում է «ռեպրեսիաների» և չի խորշում ձերբակալելու անգամ տարիքն առած մարդկանց՝ **տատիկներին**: Ընդհանրական համատեքստը օգնում է բացահայտելու, թե ինչպես են լեզվական չեզոք միավորները դառնում արժեքային կրողներ:

5. Գնահատողականությունը գործառական տարբեր ոճերում

Գնահատողականությունը գործառական ոճերին առավել կամ պակաս չափով բնութագրող հատկանիշներից է: **Խոսակցական ոճում** ունի անմիջական վերաբերմունքային դրսևորում, որը լեզվական մակարդակում արտահայտվում է հնչյունական, բառային, քերականական և արտահատչական ամենաբազմազան միջոցներով: Այս տեսակետից

խոսակցական ոճը զգալիորեն մոտ է մեդիալեզվին: Բայց եթե վերջինում գնահատողականությունը ի վերջո հանգում է հասարակական գնահատականի կամ դրա արտահայտությունն է, ապա խոսակցականում դա գրեթե բացառապես անհատական մոտեցման արգասիք է, որով էլ պայմանավորվում է լեզվական միջոցների գործածականությունը: **Գիտական ոճի** գնահատողականությունը արտահայտվում է գիտական եզրահանգումներով ու դատողություններով. ունի լեզվական իր յուրահատուկ միջոցները: **Պաշտոնական խոսքը** այս առումով ավելի մոտ է գիտականին, միայն թե այստեղ գնահատողականությունը արտահայտվում է առավելապես հանձնարարականների, կիրառվող պարտադրական լեզվական միջոցներով: **Գեղարվեստական խոսքում** սովորաբար (հիմնականում գեղարվեստական մեթոդով պայմանավորված) ունի ոչ ցայտուն դրսևորումներ, որը և արտահայտվում է լեզվական մակարդակում: Գեղարվեստական տեքստի հեղինակը առավելապես հակված է, այսպես կոչված, թաքնված լեզվական միջոցներով կամ ենթատեքստով իր վերաբերմունքը արտահայտելուն: Այսպես, օրինակ՝ Կ. Զարյանի «Տատրագոմի հարսը» պոեմը ավարտվում է Հովանի ինքնասպանությամբ. Հովանը սպանում է սեփական կնոջը՝ իբրև թե հայ ֆիդայու իր պատիվը գետնով տալու համար (այս հարցում Կ. Զարյանի վերաբերմունքը նույնպես միանշանակ չէ), և ինքնասպան է լինում. խելակորույս ընկնում է սարերը («զարկաւ դուռը սարերու»): Զարյանը իր վերաբերմունքը արտահայտում է շատ աննկատ և դա անում է փոխաբերորեն՝ ընդամենը մեկ նախադասությամբ ստեղծելով շատ սեղմ և բովանդակալից գեղարվեստական պատկեր. «Հայոց լեռներում հայոց աստվածները քայլում էին բարկացած»: Կամ՝ Հ. Թումանյանը «Անուշում» ուղղակիորեն չի նախատում, չի հանդիմանում, չի «գնահատում» մանկության ընկերոջը սպանած Մոսիի արարմունքը: Հեղինակային իր դիրքորոշումը շատ նրբորեն արտահայտում է բառընտրությամբ՝ բառի հոմանշային տարբերակների, բառի իմաստային նրբերանգների, թվում է, աննշան փոփոխություններով: Դա ցայտուն երևում է մարդասպանի կերպարանքի նկարագրության չորս տողերի նախնական և մշակված տարբերակների համեմատությամբ:

Եղել է՝

*Եվ մարդասպանը դուրս եկավ ձորից,
Մոլոր է հաղթական նրա քայլվածքը,
Սարսափ է ընկնում արնոտ աչքերից,
Եվ խառնված է հպարտ հայացքը:*

Դարձրել է՝

*Եվ մարդասպանը դուրս եկավ ձորից,
Դեմքը այլայլված, քայլվածքը՝ մոլոր,
Սարսափ է կաթում արնոտ աչքերից,
Եվ կերպարանքը փոխված է բոլոր:*

Մոսխն ինքն էլ նահապետական բարքերի գոհ էր: Սակայն, միևնույնն է, հարազատ ընկերոջը սպանողի քայլվածքը Թումանյանը չի կարող անվանել **հաղթական** և չի կարող **հպարտ** հորջորջել մարդասպանի հայացքը: Սա վերաբերմունք է, որը կերտվում է բառի, տողի, պատկերի (տե՛ս մյուս փոփոխությունները) «թաքուն» ու հմուտ ընտրությամբ: Գնահատողականությունը միջնորդավորված է: Սա գեղարվեստական տեքստի գնահատողական բնության յուրահատկություններն են:

Գնահատողականությունը **ԶԼՄ-ում** այլ է: Դա զանգվածային հաղորդակցության միջոցների լեզվի ընդհանուր կիրառական հատկանիշն է, կարելի է ասել՝ մեղիատեքստի «բնավորության» հիմնական գծերից մեկը: Սովորաբար ունենում է ուղղակի, անմիջական բնույթ. արտահայտվում է գնահատողական բացասական և դրական լեզվամիջոցներով, որոնք կարող են լինել բացահայտ կամ թաքնված (ներակայունով): Փոփոխություններ է կրում զարգացման տարբեր շրջափուլերում:

6. Ժանր և գնահատողականություն

Ժանրային առանձնահատկությունները ոչ միայն սահմանում են լեզվական միջոցների ընտրությունը, այլև մի որոշակի չափով կանխորոշում են, թե ինչ կերպ և ինչ խորությամբ կարող է դրսևորվել գնահատողականությունը: **Լրատվական ժանրերում** գերակշռում են թվացյալ չեզոք լեզվատարրերը, թեև, ինչպես տեսանք, այստեղ կարող են դրսևորվել թաքնված գնահատականներ՝ ընտրովի փաստեր, վերնագրերի ձևակերպման և այլ միջոցներով: Գնահատողականությունը բաց է և ակնհայտ **մեկնաբանություններում ու վերլուծական ժանրերում**: Այստեղ կարող են գործածվել հստակ գնահատողական միավորներ՝ ընթերցողին կողմնորոշելու նպատակով: Գնահատողականությունը կենտրոնական դեր ունի **գովազդներում, PR-տեքստերում**. ապրանքը կամ ծառայությունը ներկայացվում է բացառապես դրական լույսի ներքո՝ փոխաբերության, համեմատության, չափազանցության, բառախաղերի և զանգան այլ միջոցներով: Սոցիալական մեղիահարթակներում, որտեղ ժանրերը գերազանցապես հիբրիդային են, գնահատողականությունը ավելի ինտենսիվ է. օգտագործվում են հեշթեգներ, էմոջիներ, գրաֆիկական ձևավորումներ, ուղղակի հույզ արտա-

հայտող բառապաշար, շարահյուսական տարատեսակ կառույցներ՝ երկրորդ դեմքի ակտիվ օգտագործմամբ:

Գովազդային տեքստը լեզվաոճական յուրօրինակ զարգացում ստացավ թվայնացված մեդիայում: 21-րդ դարում ձևավորվեց հաղորդակցական նոր համակարգ՝ **թվային գովազդ**: Գովազդի այս տեսակը գործում է ցանցային միջավայրում: Սովորաբար ծավալով լինում է շատ ավելի փոքր, քան սովորական գովազդը: Այն բնութագրվում է որպես «արագ ազդակների լեզու» (Ժան Պիեռ Փենեթ): Միավորում է տարբեր ոճեր՝ գրական, խոսակցական, ժարգոնային, որը հաճախ արտահայտվում է գնահատողական բառային զուգորդումներով՝ *գրական + ժարգոն (սլենգ) + անգլերեն* («limited edition ջինսեր. Մենց բան խանութում չես գտնի՝ real deal only» (Telegram), «Ինչպե՞ս և ի՞նչ վաճառել WILDBERRIESում» (Facebook)): Լեզուն կազմակերպվում է ոչ թե գրական նորմի պահպանման, այլ ազդեցիկության և դրական գնահատման տրամաբանությամբ: Ասել է թե՛ այստեղ սպասելի են հայերենի գրական նորմից բոլոր տեսակի շեղումները՝ պայմանով, որ դրանք ծառայեն գովազդային նպատակների: Թվային գովազդը նախընտրում է 2-րդ դեմքի ուղղակի դիմումներ, հարցադրումներ, հրամայականի ձևեր: Գործածում է նշանային և հուզական հավելումներ: Տեքստը հաճախ կառուցվում է տեսողական տիրույթում. ինտեգրված է պատկերին, հնչյունին, հեշթեգին, հղումնին, որոնք զուգորդվում են լեզվական կարճ ձևերով, գեղջված կառույցներով:

Ավելորդ չենք համարում ներկայացնել թվային գովազդի մեկերկու օրինակ (սմայլիկները, խորհրդանիշները ևն արտացոլված չեն)՝

1.

Visa Digital՝ առցանց վճարումների քո ուղեկիցը:

Այն մշտապես քո սմարթֆոնում է: Կարևորում է ժամանակդ, խնայում է բնությունը:

Այն լիարժեք քարտ է, որով կարող ես կատարել ինչպես առցանց, այնպես էլ անհպում վճարումներ:

Պատվիրիր հաշված վայրկյանների ընթացքում Հայէկոնոմբանկի AEB Mobile հավելվածի միջոցով՝ առանց բանկին մոտենալու:

Քարտը պատրաստ կլինի առավելագույնը 24 ժամվա ընթացքում:

AEB Mobile՝ քո թվային բանկը:

Աղբյուր՝ Հայէկոնոմբանկ Youtube-յան ալիք, տեսանյութ 26 / 05 / 2022 https://youtu.be/6wcmlook9f8?si=gh9SG256Dr6_z8do

2.

Ամառը տարվա լավագույն ժամանակն է՝ բացելու նոր գիրք և խորասուզվելու հետաքրքիր պատմության մեջ:

Զգիտե՛ս՝ ինչից սկսել: «Yandex Books» հավելվածում կա ընտանեկան ընթերցանության մի ամբողջ դարակաշար՝ երեկոյան հեքիաթներից մինչև մեկ շնչով կարդացվող վեպեր (<https://bit.ly/3FPP4ms>):

Ընտրի՛ր քո պատմությունը և կարդա՛ «Yandex Plus»-ի բաժանորդագրությամբ*՝ առանց բաժանորդագրության վճարի և ինտերնետի ՄԲ-երի սպառման:

*«Yandex Plus»-ը հասանելի է կանխավճարային և հետվճարային «UNLIM», «X», «Y» և կանխավճարային «START+» սակագնային պլանների բաժանորդներին:

Viva. հետաքրքիրն ու օգտակարը՝ քո շուրջը...

Աղբյուր՝ Viva ֆեյսբուքյան պաշտոնական էջ, հրապարակում 18 / 06 (2025 <https://www.facebook.com/share/p/16qjahjRxb>)

7. Գնահատողականությունը տարբեր մեդիաօրինակներում

Մեդիալեզվում գնահատողականությունը առանձնահատկություններ է դրսևորում նաև **հաղորդակցման տարբեր հարթակներում**: Լրատվության միջոցի տեսակը (տպագիր մամուլ, ցանցային, էլեկտրոնային, հեռուստատեսային ևն) օբյեկտիվորեն պայմանավորում է գնահատանքի չափաբաժնի, ուղղակիության և արտահայտչականության վրա: **Տպագիր մամուլում** այն հիմնականում տեղեկատվական է և զուսպ՝ հատկապես լուրերի բաժնում: Գնահատողականությունը սովորաբար արտահայտվում է մեկնաբանություններում, ռժավորված վերնագրերում, եզրակացնող գնահատումներում: Ըստ այդմ՝ լեզուն գրական է, չափավոր կողմնորոշումներ տվող: Գերիշխող են անուղղակի գնահատումները: **Հեռուստատեսությունը**, համադրելով ձայնը, պատկերը և տեքստը, ձևավորում է ուժեղ ազդեցության հարթակ, որտեղ գնահատողականությունը արտահայտվում է հաղորդողի հնչերանգով, շեշտադրումներով, խոսքային դադարներով, մոնտաժի միջոցով ընտրված կադրերով, ֆոնային երաժշտությամբ: **Սոցցանցերը**

(Telegram, Facebook, TikTok ևն) տալիս են առավելագույն ազատություն: Այստեղ գնահատողականությունը ունի գերարտահայտված դիրքորոշում, ինտերակտիվություն. կարող է լինել բացահայտ սարկազմիկ կամ հեգնական: Կարող է արտահայտվել **emoji**-ներով. **clickbait** վերնագրերով, **meme** ֆորմատներով: Դրան բնորոշ է գնահատողականության դինամիկ փոփոխությունը՝ կախված սոցիալական և տեխնոլոգիական միջավայրից: Այս միջավայրում գնահատողականությունը դառնում է ոչ թե ուղեկից, այլ հիմնական նպատակ: Ցանցային (առցանց) միջավայրում, էլեկտրոնային մամուլում գնահատողականությունը միջին դիրք է գրավում իր արտահայտման ձևերով:

Եզրակացություններ

Մեդիալեզվի զարգացման ընթացքը տպագիր մամուլից մինչև թվային հարթակներ ցույց է տալիս հաղորդման նպատակների ու միջոցների աստիճանական փոփոխություն: Եթե խորհրդային շրջանում հայկական ԶԼՄ-ների գնահատողականությունը թելադրվում էր իշխող գաղափարախոսությամբ և ուներ բևեռացված ուղղափառ բնույթ, ապա հետագայում՝ հատկապես 2018-ից հետո, տարածում գտավ անհատական վերաբերմունքի և համոզման վրա հիմնված գնահատողականությունը: Դա արտահայտվեց հետևյալ հիմնական հատկանիշներով.

Գնահատելու ձգտումը: Առաջացավ դիրքորոշում արտահայտելու ուժեղ պահանջ: Մինչ այդ շատ լրատվության միջոցներ (մասնավորապես՝ պետական կամ կիսապաշտոնական) փորձում էին չեզոք երանգներ պահպանել, սակայն հեղափոխության օրերին ու դրանից հետո գնահատողական տեքստերի տոկոսը կտրուկ աճեց: Լրագրողներից, մեդիափորձագետներից և անգամ սովորական օգտատերերից ակնկալվում էր բաց և ուղղակի վերաբերմունք՝ աջակցություն կամ քննադատություն: Լեզուն դարձավ բևեռացված, ինչը նույնպես ենթադրում էր բարձր գնահատողականություն:

Նոր բառապաշար: Դա վերաբերմունքի փոխակերպման արգասիք էր: Հեղափոխությունը բերեց գնահատողական նոր բառապաշար: «Ժողովուրդ», «նոր Հայաստան», «իրական Հայաստան», «արդարություն», «սպիտակներ», «թավիշ», «հպարտ քաղաքացիներ», «դուխով». այս և նման բառերը ձեռք բերեցին բարձր գնահատողական, գրեթե սրբագործված իմաստ, և հակառակը՝ «նախկիններ», «հին իշխանութ-

յուն», «սևեր», «ռոբասերժական», «նախորդ», «հակահեղափոխական» և շատ այլ բառեր ստացան բացասական գնահատողական կշիռ, հաճախ՝ նույնիսկ առանց հիմնավորման: Խոսակցական լեզուն առավել քան երբևէ ներխուժում է լրատվության միջոցներ իր բոլոր դրսևորումներով (ժարգոն, գոեհկաբանություն, հասարակաբանություն, հայիոյախոսական արտահայտություններ ևն): Այս բառապաշարը ակտիվ օգտագործվում է թե՛ լրատվության միջոցների վերնագրերում, թե՛ քաղաքական խոսույթում, թե՛ առհասարակ մեդիահարթակում:

Գերագնահատման վտանգը, հուզական հագեցվածությունը.

ձևավորվել է միտում, երբ գնահատողականությունը այլևս չի հանդուրժում բանավեճ: Նոր իշխանությունների և տարվող նոր քաղաքականության նկատմամբ դրական գնահատականները երբեմն կորցնում են լեզվաբանական հավասարակշռությունը՝ դառնալով կաղապարային ու քիչ քննադատական, իսկ քաղաքական հակառակորդների նկատմամբ՝ անվերապահորեն բացասական ու անզիջում:

ԶՀՄ-ն դարձավ գնահատողականության ազատ դրսևորման հարթակ: Յուրաքանչյուր օգտատեր կարող էր արտահայտել իր վերաբերմունքը տեքստով, տեսանյութով, հեշթեգով, emoji-ով: Մեդիալեզվի գնահատողականությունը սկսեց ուժեղ արտահայտվել ոչ թե մասնագետ լրագրողների, այլ ավելի հաճախ հենց հասարակության ու ցանցային օգտատերերի կողմից: Ակտիվ դերակատար դարձավ նաև լսարանը:

Գնահատողականությունը ձևավորվում է որպես մեդիատեքստի գաղափարական և հուզական ներգործման առանցք, քանի որ՝ * լուրերն ու նյութերը մրցակցում են ուշադրության համար՝ պահանջելով հստակ վերաբերմունք, * լսարանը վերածվում է ակտիվ ընկալող և արձագանքող, հետևաբար նաև գնահատող համահեղինակի, * գնահատումը դառնում է տեղեկատվական և ներգործող համաժամանակյա լեզվամշակույթ, * փոխվում է լսարանի վերաբերմունքը ոչ միայն բովանդակության, այլև հաղորդողի նկատմամբ:

Ժամանակակից հաղորդակցական համակարգերում այդպիսով մեդիալեզուն կորցնում է իր զուտ տեղեկատվական բնույթը՝ վերածվելով ազդեցության և դիրքորոշման միջավայրի:

Այս ամենը դրսևորվեց ինչպես զուտ լեզվական-արտահայտչական միջոցների կոնկրետ գործածությամբ, այնպես էլ «արտալեզվական» միջավայրում՝ համատեքստ, գործառական ոճեր, ժանր, մեդիահարթակ և

գնահատողականություն առնչություններում, որոնք հանգամանորեն քննվում են սույն հոդվածում:

Յուրի Ս. Ավետիսյան – հեղինակ է տասնյակից ավելի մենագրական աշխատանքների, ձեռնարկների ու դասագրքերի, մոտ յոթ տասնյակ գիտական հոդվածների: Համահեղինակ է երկու տասնյակից ավելի գրքերի: Գիտական նախասիրություններն են՝ արևմտահայերեն, խոսքի մշակույթ և ոճագիտություն, ժամանակակից հայոց լեզվի քերականություն և այլն:

Օգտագործված գրականություն

1. **Ալեքսանյան, Է.** (2017). Էլեկտրոնային և սոցիալական մամուլը պետական կառավարման համակարգում: *Բանբեր ԵՊՀ. Հասարակական գիտություններ*, (1), 22:
2. **Ավետիսյան, Յու., Սարգսյան, Ա., և այլք:** (2016). *Հայոց լեզու և խոսքի մշակույթ*: Երևան:
3. **Դավթյան, Յու.** (2006). *Արևելահայ մամուլի լեզուն հեղինակաբանության շրջանում*: Երևան:
4. **Դավթյան, Յու.** (2006). *Լրագրային ժանրերի լեզվաոճական արտահայտությունները*: Երևան:
5. **Եզեկյան, Լ.** (2002). *Հայերենի գործառական ոճերը*: Երևան:
6. **Խաչատրյան, Ա.** (2023). *Ժամանակակից էլեկտրոնային մամուլի լեզուն (բառային կազմ, քերականական համակարգ)*: Երևան:
7. **Հովհաննիսյան, Ս.** (2022). *Համացանցային տեքստ. կառուցվածք, գործառնություն, տեքստ*: Երևան:
8. **Շալունց, Ռ.** (1987). *Մամուլի և հրապարակախոսության լեզուն*: Երևան:
9. **Вольф, Е.** (1986). Оценочное значение и соотношение признаков «хорошо/плохо». *Вопросы языкознания*, (5).
10. **Дегальцева, А.** (2023). Приемы трансформации фразеологизмов в современной прессе. *Медиалингвистика*, 10(3), Санкт-Петербург.
11. **Клушина, Н.** (2010). *Стиль массовой коммуникации*. Москва.
12. **Колесникова, О.** (2020). *Язык и стиль современных массовой коммуникации*. Киров.
13. **Солганик, А.** (1981). *Лексика газеты*. Москва.
14. **Володина, М. Н.** (ред.). (2008). *Язык средств массовой информации*. Москва.
15. **Martin, J. R., & White, P. R. R.** (2005). *The language of evaluation: Appraisal in English*. Palgrave Macmillan.
16. **Mickiewicz, C.** (2010). *Langage médiatique et valeurs*. Presses Universitaires de Lyon.
17. **Fairclough, N.** (1995). *Media discourse*. Edward Arnold.
18. **Van Dijk, T. A.** (1988). *News as discourse*. Lawrence Erlbaum Associates.

Bibliography (Latin Script)

1. **Aleksanyan, E.** (2017). Elektronayin yev sosialakan mamuly petakan karavarman hamakargum. Banber YPH. Hasarakakan gitutyunner, (1), 22. **(in Armenian)**
2. **Avetisyan, Yu., Sargsyan, A.,** yev aylk'. (2016). Hayots lezvu yev khosqi mshakuyt'. Yerevan. **(in Armenian)**
3. **Degaltseva, A.** (2023). Priemy transformatsii frazeologizmov v sovremennoy presse. Medialingvistika, 10(3), Sankt-Peterburg. **(in Armenian)**
4. **Davtyan, Yu.** (2006). Arevelahay mamuli lezun hetkhorhrdayin shrjanum. Yerevan. **(in Armenian)**
5. **Davtyan, Yu.** (2006). Lragrayin zhanreri lezvastyogakan art'ayt'utyunnerə. Yerevan. **(in Armenian)**
6. **Ezekyan, L.** (2002). Hayereni gortsarakan votshery. Yerevan. **(in Armenian)**
7. **Hovhannisyan, S.** (2022). Hamats'ants'ayin tekst: karuc'vats'k', gortsaruyt', tekst. Yerevan. **(in Armenian)**
8. **Khachatryan, A.** (2023). Zhamanakakits elektronayin mamuli lezun (barayin kazm, kerakanakan hamakarg). Yerevan. **(in Armenian)**
9. **Klushina, N.** (2010). Stil' massovoy kommunikatsii. Moskva. **(in Russian)**
10. **Kolesnikova, O.** (2020). Yazyk i stil' sovremennykh massovoy kommunikatsii. Kirov. **(in Russian)**
11. **Shalunts, R.** (1987). Mamuli yev hraparakhosut'yan lezun. Yerevan. **(in Russian)**
12. **Solganik, A.** (1981). Leksika gazety. Moskva. **(in Russian)**
13. **Volf, E.** (1986). Otsenochnoye znachenie i sootnoshenie priznakov "khorosho/plokho". Voprosy yazykoznaniya, (5). **(in Russian)**
14. **Volodina, M. N.** (red.). (2008). Yazyk sredstv massovoy informatsii. Moskva. **(in Russian)**